# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 44 (1394) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 06, 2008
VOLUME 28, NO. 44 (1394) SATURDAY, DECEMBER 06, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՅԱՒԵՐԺԱՑՄԱՆ ԱՂԷՏԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Բնութեան տարերքով յառաջացած աղէտները թէեւ շատ յաճախ նախատեսելի, այլապէս, անդիմադրելի են: Հրդեհներ, երկրաշարժներ, Սունամեան ջրհեղեղներ, անկախաբար մարդկային կամքէն, յանկարծակի կը ժայթքին, կը հարուածեն, կ'աւերակեն, ապա, կ'անցնին կ'երթան: Այո, կ'անցնին կ'երթան, բայց, ինչպէս ժողովրդական ասացուածքը կը յուշէ, չարիքը կը գործեն ու այդպէս կ'անցնին ու կ'երթան: Սակայն, ամէն աղէտ, որքան ալ անդարմանելի թուի ըլլալ, ունի իր բալասանը, զոր պէտք է մատուցէ հայրենիքը: Ան իր փրկարար ձեռքը պարտի երկարել աղէտեալ գօտիներու: Այլապէս, աղէտը կը յաւերժանայ:

Մօտաւորապէս այս է եղերական պատմութիւնը մեր հայրենի բոլոր աղէտահար քաղաքներուն, ինչպէս Գիւմրիի, Վանաձորի եւ անոնց շարքին Սպիտակի ու անոր շուրջ տարածուող 12 գիւղերու: Անոնք, Դեկտեմբեր 7, 1988-ին, երբ աստիճան զօրու-

Շար.ը էջ 17

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԻ ՅԵՏԱԳԱՅ ՔԱՅԼԵՐԸ Կ'ՈՐՈՇՈՒԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 12-ԻՆ

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած, ընդդիմադիր կուսակցութիւններ համախմբող Հայ Ազգային Գոնկրէսի անցեալ շաբաթ տեղի ունեցած դռնփակ քննարկումներու ընթացքին հաստատուած են հետագայ ծրագրերը:

Քննարկումներու աւարտին Հնչակեան Կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեան «Ազատութիւն» ռատիոկայանին տեղեկացուցած է, որ Գոնկրէսը որոշած է համաժողով կազմակերպել Դեկտեմբերի 12-ին: «Դա նախապատրաստական, վերջնական փուլն է Գոնկրէսի կայացման», - ըսած է Ընկերուհի Սարգսեանը: - «Դրան յաջորդելու է Գոնկրէսի համագումարը»:



Հայ Ազգային Գոնկրէսի դռնփակ քննարկումներու ընթացքին

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան նոյն ռատիոկայանի այն հարցին, թէ կա՞ն արդեօք տարաձայնութիւններ հաւաքուած 16 կուսակցութիւններու միջեւ, պատասխանած է. - «Կան տարաձայնութիւններ, եւ այդ տարաձայնութիւնները գաղտնի չեն: Այստեղ խնդիր ունէինք նաեւ առաջարկութիւններ ու տեսակէտներ լսել»:

«Երկու տեսակէտ կայ, մասնաւորապէս, ղարաբաղեան հարցի կապակցութեամբ՝ ոչ մի թիզ հող չզիջելու եւ փոխզիջման տեսակէտները»: Առաջինի կողմնակիցներէն Արամ Սարգսեանը նշեց Հնչակեան կուսակցութիւնը եւ Ժիրայր Սէֆիլեանի ղեկավարած «Հայ կամաւորների համախմբումը»:

Տէր-Պետրոսեանի մօտեցումը, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդի փոխանցմամբ, հետեւեալն է՝ Գոնկրէսը կը սատարէ Ղարաբաղի ժողովուրդին, ինչպէս որ եղաւ 1988 թուականին:

Հանրահաւաքները վերսկսելու կապակցութեամբ Արամ Սարգսեան ըսաւ,- «եթէ չլինեն չնախատեսուած արտակարգ իրադարձութիւններ, Հոկտեմբերի 17-ին խոստացուած երկու ամիս դադարը կը պահպանուի»:

Միւս կողմէ, Դեկտեմբեր 1-ին կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսնակ Արման Մուսինեան յայտնեց որ, հանրահաւաքները վերսկսելու ժամկէտներու մասին շատ հաւանաբար պատասխան կու տայ Դեկտեմբեր 12-ի համաժողովը, ուր նաեւ կը ներկայացուի ընդդիմութեան հետագայ ռազմավարութիւնը, Ղարաբաղեան հարցի կարգաւորման ներկայ փուլը, երկրի տնտեսական վիճակը եւ այլն:

Ըստ Մուսինեանի, մինչեւ համաժողովի կայացումը պիտի ձեւաւորուին յատուկ յանձնախումբեր, որոնց միջոցով «ընդլայնելու են իշխանութիւնների դէմ պայքարի դաշտը»:

## ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼՈՍԱՆՃԵԼԸՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Photo by Mike Khatchadourian

Վահան Շիրխանեան մամլոյ ասուլիսի ընթացքին

Անցեալ Շաբաթ, Նոյեմբերի 29ին, 2008, Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի մամլոյ դիւանի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, Կլէնտէյլի Պրէնտ Վիու Գօլլէքշըն սրահին մէջ: Այստեղ ելոյթ ունեցաւ Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական Վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ Վահան Շիրխանեան:

Մամլոյ ասուլիսին ներկայ էին «Նոր Օր», «Նոր Հայաստան», «Նոր Կեանք», «Մասիս», «Քաջ Նազար», «Armenian Observer», «Պետութիւն եւ Իրաւունք» եւ «HayastanInfo.net», ինչպէս նաեւ «Նոր Սերունդ», «Վարագոյր», «Տեսակէտ», «Արձագանգ», «ABC» եւ «AMGA» հայկական հեռուստաժամերու թղթակիցներն ու խմբագիրները:

Բացման եւ բարի գալուստի խօսքն արտասանեց «Մասիս»ի խմբագիրներէն Յարութ Տէր Դաւիթեան: Ան կենսագրական հակիրճ գիծերով ծանօթացուց օրուան հիւրը՝ Հայաստանի նախկին

Շար.ը էջ 17

## ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՍՏԱՑԱԾ 30 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՇՆՈՐՀԻՒ

### ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻ ԱՌԹԻՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՍԱՒ 35 ՄԻԼԻՈՆԻ

Հինգշաբթի, Նոյեմբեր 27-ին, Ամերիկայի Գոհաբանութեան տօնի առթիւ տեղի ունեցած «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Թելեթոն 2008»-ը արձանագրեց նոր մրցանիշ: Հայաստանի եւ Ռուսաստանի հայ գործարարներու կողմէ խոստացուած 30 միլիոն տոլարին շնորհիւ, հանգանակութիւնը հասաւ 35,009,156: Նախկին մրցանիշը արձանագրուած էր անցեալ տարուայ թելեթոնի ընթացքին, երբ խոստացուած էր 15 միլիոն տոլար:




Թելեթոնի հեռատեսիլային ծրագիրը իրագործուեցաւ Լոս Անճելըսի մէջ ու սփռուեցաւ Հայաստանի եւ աշխարհի տարածքին:

Յայտագրին մասնակցելու նպատակով Լոս Անճելըս ժամանած էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան, ՀՀ Սփիւռքի նախարար Տիկ. Հրանոյշ Յակոբեան, Արցախի Առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ Հայաստանի հեռատեսիլի հաղորդավարներ եւ շարք մը արուեստագէտներ:

Հաղորդումի ընթացքին սփռուեցան կենդանի եւ արձանագրուած ելոյթներ, որուն մասնակցեցան պետական դէմքեր, հո-

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՎԵՐԱԾՈՒԵԼ Է ՆԱԽԱԳԱՀՈՄԵՏՐԻ

Հայաստան համահայկական հիմնադրամն անցկացրեց իր ամենամեայ հերթական հեռուստամարաթոնը, որի ընթացքում, ըստ պաշտօնական հաղորդագրութեան, հաւաքուեց մօտ 35 միլիոն դոլար փող: Դա, նախկին հեռուստամարաթոնների ցուցանիշների համեմատ, կրկնակի աւելի էր, քանի որ մինչեւ այդ ամենից շատ հաւաքագրուած ցուցանիշը եղել է մօտ 15 միլիոն դոլարը: Այդ ամենից յետոյ մնում է միայն ազգովի ուրախանալ եւ հպարտանալ, որ արձանագրուել է այդպիսի աճ, առաւել եւս համաշխարհային տնտեսութեան մոլեգնող ճգնաժամի պայմաններում: Եթէ ճգնաժամ չլինէր, ապա հաւանաբար կը հաւաքուէր առնուազն մի հարիւր միլիոն դոլար: Թէեւ միւս կողմից, շատ հաւանական է, որ հենց ճգնաժամն է շատ փող հաւաքուելու պատճառը: Բանն այն է, որ երեւի թէ աշխատել է այն յայտնի բանաձեւը, որ արդէն ինչքան ժամանակ է շրջանառութեան մէջ է դնում Հայաստանի իշխանութիւնը: Խօսքը համաշխարհային ճգնաժամից նեղուած եւ հանգիստ տեղ որոնող կապիտալի մասին է: Ըստ երեւոյթին, համահայկական հեռուստամարաթոնին մասնակցել են նաեւ այլազգի մեծահարուստներ, որոնք նախընտրել են իրենց գումարներն ուղղել Հայաստան հիմնադրամին, իմանալով, որ դրանք գալու են շառից ու ճգնաժամից հեռու կայուն Հայաստան:

Ոմանց համար վերը նշուած վարկածը կը թուայ անլուրջ մօտեցում համահայկական լուրջ երեւոյթի հանդէպ: Սակայն խնդիրն այն է, որ համահայկական այդ լուրջ երեւոյթը անլրջացնում են հենց դրա կազմակերպիչները: Շատերին կարող է թուալ, որ խօսքը հեռուստամարաթոնի եթերային բովանդակութեան մասին է, որն արդէն քանի տարի է անփոփոխ է մեծ հաշուով: Որոշ չորիխներ փոխւում են, փոխւում է առաջնորդող երգը եւ տեսահոլովակը: Ասենք եթէ մի տարի տեսահոլովակը նկարահանւում է Հիւսիսային պողոտայի, ապա միւսը նկարահանւում է օրինակ Էրեբունի հիւրանոցի ֆոնին, յաջորդը թերեւս մէկ այլ նորակառոյց էլիտարի, բայց մարաթոնի եթերը ընդհանուր առմամբ շարունակում է մնալ նոյնը, նոյն դէմքերով, նոյն յուզական ճառերով, նոյն "հայկական էսքիզներով", ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ ամէն տարի այդ եթերի կազմակերպման վրայ կատարւում են աւելորդ ծախսեր, իզուր տեղը թանկուկրակ տոմսեր են գնւում ամբողջ պաշտօնական, դերասանական, հաղորդավարական, շոուբիզնեսական չքախմբեր Ամերիկա գործուղելու եւ մի քանի շաբաթ այնտեղ պահելու համար, քանի որ բաւական է ցուցադրել նախորդ տարուայ տեսագրութիւնները: Օրինակ, կարելի է մի տարուայ տեսագրութիւնն ասենք առնուազն երեք տարի ցուցադրել, իսկ կազմակերպական ծախսերից խնայուած փողն էլ հենց ուղղել հիմնադրամի որեւէ ծրագրի:

Բայց, թէեւ մի ամբողջ պարբերութիւն խօսեցի, այդուհանդերձ հենց կազմակերպիչների ցուցաբերած անլրջութեան մասին խօսքը չէր վերաբերում եթերային բովանդակութեանը: Խնդիրը հեռուստամարաթոնի հանդէպ, որպէս երեւոյթ, մօտեցման մասին է: Տպաւորութիւնն այն է, որ մենք մրցում ենք ինքներս մեզ հետ, չգիտես ում ինչ որ բան ապացուցելու համար: Մարաթոնը, համահայկական հանգանակութիւնը վեր է ածուել մաթեմատիկայի օլիմպիադայի պէս մի բանի, երբ կարեւորը թուերն են, գումարումները եւ հանումները: Կարեւորն այն է, թէ ով ինչքան տուեց, ով ամենաշատը տուեց, ով կարող էր ամենաշատը տալ, բայց քիչ տուեց, ով ինչքան ունեցածի քանի տոկոսը տուեց, եւ վերջում ինչքան հաւաքուեց ընդհանուր առմամբ, որ յայտարարուի հերթական ռեկորդի մասին: Իսկ ռեկորդն էլ պէտք է, որ պաշտօնական քարոզչութիւնն այն ներկայացնի որպէս իշխանութեան շնորհ: Այսինքն, այսինչ նախագահի օրօք հայերը հաւաքեցին այսքան փող, ուրեմն այդ նախագահը լաւագոյնն է: Այսինքն, Հայաստան համահայկական հիմնադրամը վեր է ածուել նախագահի հեղինակութիւնը փողով չափելու գործիքի, իւրօրինակ նախագահոմետրի: Աւելի շատ վեր են արել, կարծելով, թէ դա հասարակութեան վրայ թողնում է ինչ որ ազդեցութիւն: Սակայն իրական ազդեցութիւնն այն է, որ հասարակութիւնը, համահայ հասարակութիւնը, տարէցտարի փաստացի հիասթափւում է համահայկական հանգանակութիւնից: Դրա մասին է վկայում այն, որ տարէցտարի, հիմնադրամի հեռուստամարաթոնների ընթացքում հանգանակուող գումարի մէջ աւելի ու աւելի քիչ տեսակարար կշիռ է կազմում շարքային նուիրատուների ծաւալը, եւ ռեկորդները սահմանւում են առաւելապէս մեծահարուստների շնորհիւ: 2008 թուականի մարաթոնը դրա կարծես թէ դասական օրինակն էր: Հաւաքուել է 35 միլիոն դոլար: Սակայն փաստացի, դրա ընդամէնը 5 միլիոնն է այսպէս ասած բառի բուն իմաստով համահայկական նուիրատուութիւն, իսկ մնացեալ 30-ը ապահովուել է հայ մեծահարուստների խոստումների միջոցով, որ տրուել էին մի քանի օր առաջ, Հայաստանի նախագահի կազմակերպած ընթրիքի ընթացքում:

Իհարկէ, այդ մեծահարուստներն էլ հայ են, սակայն խնդիրն այն է, որ եթէ համահայկական հանգանակութեան մօտ 80 տոկոսը հաւաքում են մի քանի հայ մեծահարուստներ, եւ ընդամէնը 10-20 տոկոսն է իրապէս համահայկական աշխարհագրութիւն ապահովում, ապա այդ դէպքում լուրջ կասկածներ են առաջանում Հայաստան հիմնադրամի համահայկականութեան վերաբերեալ: Աւելի շուտ, այդ կասկածները երեւի թէ առաջանում են հենց համահայութեան շրջանում, կամ առաջացել են արդէն, որ հիմնադրամի հանգանակութեան ծաւալը հնարաւոր է լինում "ապահովել" միայն մեծահարուստների միջոցով: Ինչու է այդպէս: Դա հարց է, որի պատասխանը պահանջում է լուրջ ուսումնասիրութիւն, պահանջում է հիմնադրամի աշխատանքի լուրջ վերլուծութիւն, պահանջում է մօտեցումների վերանայում, արդիւնքների անաչառ ամփոփում: Սակայն, հնարաւոր է, որ որեւէ մեկին դա չի էլ հետաքրքրում, քանի որ կարեւորը մեծահարուստներն են, որոնց հետ իշխանութիւնը միշտ էլ կարող է հանգել որոշակի պայմանաւորուածութիւնների, փող չգիտես ինչի դիմաց գործարքների եւ ապահովել քարոզչական ֆոնը: Իսկ գործնական ֆոնը, երեւի թէ ինչպէս կ'ստացուի, թերեւս ինչ որ կը մնայ:

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**
**«ԼՐԱԳԻՐ»**

# ԱՆՁՆԱԿԱՆ PR՝ ԵՐԿԻՐԸ ԽԱՅՏԱՌԱԿԵԼՈՒ ԳՆՈՎ

Նախօրէին մեր հասարակութիւնը կարգին զուարճանալու հերթական հնարաւորութիւնը ստացաւ: «Գելափ» կազմակերպութիւնը Հայաստանում սոցիոլոգիական հետազօտութիւն է իրականացրել« որի արդիւնքներն էլ երկու օտարերկրացիներ ներկայացրեցին հանրութեանը:

Բայց այն «որ արդիւնքները ներկայացնողները յայտնի չէին» որեւէ մեկին հազիւ թէ խաբի: Բանն այն է «որ բուն սոցիոլոգիական հարցումը («դաշտային աշխատանքները») հայերն են իրականացրել» իսկ հետազօտութեան պատուիրատուն էլ Հայաստանի Հանրային հեռուստաընկերութիւնն է: Այսքանով կարելի էր թեման փակուած համարել» բայց քանի որ երկու օր շարունակ իշխանական քարոզչամիջոցները թմբկահարում էին այս թեման« արժէ փոքր-ինչ հանգամանօրէն անդրադառնալ հարցման «արդիւնքներին»:

Սկսենք առաւել ծիծաղաշարժ դրուագներից: Ըստ հետազօտութեան «արդիւնքների», «հարցուողների 8.1 տոկոսը կարծում է« որ Գագիկ Ծառուկեանը հանրապետական է« 5.2 տոկոսը կարծում է« որ Րաֆֆի Յովհաննիսեանն էլ է հանրապետական« 1.2 տոկոսը կարծում է« որ Րաֆֆի Յովհաննիսեանն ամէն դէպքում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնից է» 2.4 տոկոսը վստահ է« որ Սերժ Սարգսեանը «Ժառանգութիւն» կուսակցութեան անդամ է եւ այլն: Բայց սա դեռ ոչինչ: Բանից պարզւում է՝ հարցուածների 7.1 տոկոսի կարծիքով» Սերժ Սարգսեանն ընդդիմադիր է (թէ յատկապէս ում է ընդդիմադիր՝ ցաւօք« չի ասւում): Ինչեւէ: Իշխանական քարոզչամիջոցներն «իհարկէ» այս տուեալները չեն հրապարակի (որպէսզի «աշխատանքը ջուրը չլցուի» «եւ «հետազօտութիւնն անլուրջ տպաւորութիւն չթողնի): Նրանց հետաքրքրում են միայն այն «արդիւնքները»«որոնց համաձայն« եթէ նախագահական ընտրութիւնները տեղի ունենային յաջորդ կիրակի« հասարակութեան 37.4 տոկոսն իբր կը քուէարկէր Սերժ Սարգսեանի օգտին« իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանի օգտին կը քուէարկէր ընդամէնը 6.5 տոկոսը:

Եւ այնուամենայնիւ«ինչո՞ւ են իշխանութիւններն այսքան ծախս արել ու այս օրերին նման հետազօտութիւն պատուիրել: Ո՞րն է պատճառը«եթէ «պաշտօնապէս» առաջիկայում ոչ նախագահական ընտրութիւններ են սպասւում «ոչ խորհրդարանական: Ինչո՞ւ են իրար խառնուել: Պատճառն ըստ երեւոյթին այն է«որ Յունուար-Փետրուարին Հայաստանում այնուամենայնիւ բուռն քաղաքական իրադարձութիւններ են սպասւում« ու որեւէ մէկը չի կարող ասել« թէ ինչ արդիւնքի կը հանգեցնի ընդդիմութեան պայքարի ակտիւացումը: Սրանից ելնելով էլ՝ իշխանութիւնները որոշել են քարոզչական այս հնարքին դիմել« որն ուղղուած կը լինի միաժամանակ ե՛ւ հասարակութեանը« ե՛ւ ընդդիմադիր քաղաքական դաշտին: Հասարակութեան «մասով» նպատակը պարզ է. ցոյց տալ« թէ իբր Մարտի 1-ից ու մոսկովեան խայտառակ հռչակագրի ստորագրումից յետոյ ոչինչ չի փոխուել՝ Սերժ Սարգսեանը շարունակում է վայելել հասարակութեան վստահութիւնը« եւ ժողովուրդը նրա նկատմամբ լոեալ է տրամադրուած: Թէ իրականում ինչպիսին է այդ «լոյալութիւնը»՝ ցանկացած մարդ կարող է ամէն օր փողոցում լսել«բայց խնդիրը սա չէ: Մեծ հաշուով« ռեժիմն ընդամէնը փորձում է ցոյց տալ« թէ իբր Սերժ Սարգսեանին վերջնականապէս յաջողուել է յաղթահարել յետընտրական ճգնաժամը եւ ներքաղաքական զարգացումները տեղափոխել բնականոն հուն: Բայց համաձայնուէք՝ ամէն դէպքում տարօրինակ է «որ դա ապացուցելու համար «նախընտրական միջոցառում» է իրականացւում: Հակառակ դէպքում հարցման պատուիրատուները ոչ թէ առաջիկայ ընտրութիւնների մասին կը հարցնէին «այլ» օրինակ«առանցքային խնդիրներում տարբեր գործիչների մօտեցումների մասին:

Ինչ վերաբերում է ընդդիմադիր դաշտին յղուած «մեսիջին»« ապա այստեղ նոյնպէս ամէն ինչ բաւականին պարզունակ է: Այս առումով պատուիրատուների նպատակն ակնյայտօրէն եղել է Րաֆֆի Յովհաննիսեանին սիրաշահելը (գրեթէ բոլոր պարամետրերով նրա վարկա-

Շար.ը էջ 3

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՄՕՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ



«Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր Րաֆֆի Յովհաննիսեան

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕՅ»: Ազգային ժողովի պատգամաւոր, խորհրդարանում ներկայացուած միակ ընդդիմադիր քաղաքական ուժի հիմնադիր, Հայաստանի առաջին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանը մօտ ապագայում Ղարաբաղեան հարցի լուծում չի տեսնում:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Րաֆֆի Յովհաննիսեանը այսօր «ձեւական քայլ» գնահատեց թէ՛ Թուրքիա - Հայաստան յարաբերութիւնների ջերմացման եւ թէ՛ Ղարաբաղեան խնդրի վերաբերեալ քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների հետ քննարկման՝ Սերժ Սարգսեանի վերջին նախաձեռնութիւնները:

«Թուրքիա - Հայաստան յարաբերութիւնների նախաձեռնութիւնը ձեւական քայլ է եղել, որը մինչեւ հիմա իր բովանդակութիւնը չի ստացել, Հայաստանի շահը արժանուոյնս չի ներկայացուել», - ասաց նա՝ շարունակելով. - «Նոյնը այստեղ [Լեռնային Ղարաբաղի հարցում]: Կարծում եմ, թէ ձեւական ճշգրիտ քայլ է, որը, սակայն, բովանդակութիւն իր մէջ քիչ կրեց: Այնտեղ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների բացակայութիւնը ակնբախ էր, եւ այդ բացակայութիւնը փաստօրէն արտացոլում է բանակցային գործընթացից Արցախի բացակայութիւնը»:

«Ես չեմ կարծում, որ մինչեւ հիմա որեւէ մէկը յանձնառած լինի Մադրիդեան սկզբունքների բացայայտումը. որո՞նք են այդ սկզբունքները... Հայաստանի նախագահը ասում է, որ դա մատչելի է ինտերնետում, կայքերում, արտգործնախարարը ասում է, որ դա ամէն դէպքում հրապարակման ենթակայ չէ: Ուզում եմ ասել, որ հետեւողական համապարփակ պետական քաղաքականութիւն տակաւին չկայ: Եւ սա ես ոչ թէ ասում եմ չարաբար, այլ ցաւով եմ ասում, որ սա է վիճակը: Մեզ մօտ երեսպաշտութիւնը շատ ու շատ է: Այդ խորհրդակցութիւնում ամէն դէպքում, իմ կարծիքով, չբացայայտուեց բանակցութեան հիմքը: Եթէ Մադրիդեան սկզբունքներ դրանք են, որոնք հրապարակուել են, դա ցոյց է տալիս, որ Հայաստանի դիւանագիտութիւնը ձախողուել է, ձախողուել է բոլոր իշխանութիւնների օրօք», - ասաց Րաֆֆի Յովհաննիսեանը:

# ՄԱՐՏԻ 1-ՈՎ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ԱՍԵԼԻՔ ՈՒՆԻ



«Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ Սուրէն Աբրահամեան

«Մենք դեռ նիւթեր ունենք, եւ երբ համոզուած լինենք, որ նպատակաուղղուած քննութիւնը կատարուած յանցագործութիւնը ոչ թէ թաքցնելու, այլ բացայայտելու խնդիր ունի, այդ բոլորը կը դրուի ի շահ գործի օբիեկտիւ բացայայտման: Իսկ որ որոշակի մեկնաբանութիւններ եւ բացայայտումներ նորից են լինելու՝ մի րոպէ մի կասկածէք»,-«Ա1+»-ին տուած հարցազրոյցում ասաց ՀՀ ՆԳ նախկին նախարար, «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ Սուրէն Աբրահամեանը:

Նա նաեւ գնահատական տուեց օրերս խորհրդարանական յանձնաժողովի հրապարակած տեսաերիզին, որն ըստ նրա համոզմամբ՝ ոչ թէ անհատ քաղաքացիների, այլ իշխանութիւնների պատրաստած ֆիլմն էր՝ ընդդիմութեան գաղտնալսումներով, որն իրականացրել է ԱԱԾ-ն:

«Դա իշխանութիւնների կողմից սարքած, սեփական յանցագործութիւնները ուրիշի վրայ բարդելու անհեթեթ եւ անմակարդակ պատրաստուած մի սցենար էր, որի հիմնական վերնագիրը ես կը դնէի «բայղուշութիւն»: Ինչ աստիճանի անճար լինեն, որ ամենախիստ ապացուցողական բազան, մեղադրանքն այդ անհեթեթութիւնն է, այն էլ գաղտնալսումների ձեւով, ընդ որում ապօրինի գաղտնալսումների միջոցով արուած«,-ասաց նա:

Այս ֆիլմը Սուրէն Աբրահամեանին յիշեցնում է վրացական յայտնի սովորոյթը, երբ «մեռելի վրայ լացող կանանց են բերում, երեք ռուբլիանոց լացողներին՝ բայղուշի նման. այդ մակարդակի գործ էր»:

Ինչ վերաբերում է ֆիլմում արուած ակնարկներին, թէ Մաշտոցի պողոտայից Սուրէն Սիրունեանը Առաջին նախագահի շտաբի պետ Ալեքսանդր Արզումանեանին տեղեկացնում է կատարուածի մասին, այսինքն՝ իրենք տեղեակ են եղել, թէ ինչ է տեղի ունենում յարակից տարածքում, ապա Սուրէն Աբրահամեանն ասաց.

«Ընդամէնը կատարուած փաստի վերաբերեալ ինֆորմացիայի փոխանցում էր եւ ով էլ ուզում է լինի՝ պարոն Արզումանեանը, թէ ուրիշը, դա նրա գնահատականն էր կատարուածի մասին. այստեղ կրիմինալ փնտռել, իրաւական հարթութեան մէջ դնել՝ անպտուղ գործ է. կրիմինալի տարր անգամ չկայ. շատ խիստ մօտենալու լինենք՝ բարոյական հարթութեան մէջ, լաւ՝ ինչո՞ւ նման գնահատական տուեց: Բայց դա առնչութիւն չունի կրիմինալի հետ. փնտռել այնտեղ այն, ինչ իրենք են ուզում, այդ աղմուկը, անյաջող ձայնով ներկայացնել յանցանքներ ու կպցնելու ընդդիմութեանը, անիմաստ գործ է»:

# ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԻՋԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՐՈՒԵԼ ԵՆ

Գիւմրիի քաղաքապետ Վարդան Ղուկասեանի եւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանի միջեւ առաջացած հակասութիւնները Գիւմրիի հանրութեան որոշ շրջանակների հարկադրել են հանդէս գալ ուղերձով՝ ի պաշտպանութիւն թեմի առաջնորդի, որտեղ մասնաւորապէս ասուում է. - «Վերջերս վարչաքաղաքական ուժի բիրտ միջամտութեամբ փորձ է արւում կասեցնել սրբազանի գործունէութիւնը՝ շահարկելով նրա քաղաքացիական դիրքորոշումը»:

Ուղերձի հեղինակներից՝ ժուռնալիստների «Ասպարէզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաստատեց Գիւմրու քաղաքապետի կողմից Շիրակի թեմի առաջնորդի դէմ նախաձեռնած քայլերի մասին լուրերը եւ նշեց, որ Վարդան Ղուկասեանի եւ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանի միջեւ ծագած հակասութիւնը բարդ նախապատմութիւն ունի:

«Եկեղեցապատկան հողերում յուշարձանների տեղադրման, խանութի տարածքի յատկացման փաստերը ընդամէնը դրուագներ են այս ամբողջ պատմութեան մէջ», - ասաց Բարսեղեանը, - «Թեմի առաջնորդը ասել է, որ 9 տարի շարունակ առողջ յարաբերութիւններ չեն եղել քաղաքապետարան եւ թեմի առաջնորդարան մակարդակում: Ինքը պարտաւոր էր վտանգ եւ մտահոգութիւն զգալիս արտայայտուել եւ իր թեմին տեղեակ պահել այդ մասին»:

Գիւմրիի քաղաքապետը՝ ըստ մամուլի հրապարակումների, մի շարք քայլեր է նախաձեռնել՝ նպատակ ունենալով վարկաբեկել Շիրակի թեմի առաջնորդին:

# ԱՆՁՆԱԿԱՆ PR

Շարունակուած էջ 2-էն

նիշն անհամեմատ աւելի բարձր է« քան Լեւոն Տէր-Պետրոսեանինը): Ընդ որում« ակնյայտ է« որ ոչ թէ նրա ցուցանիշներն են արհեստականօրէն բարձրացուած« այլ Տէր-Պետրոսեանի ցուցանիշներն են իջեցուած: Թէ ինչու՝ կարծում ենք« մեկնաբանել չարժէ: Ըստ երեւոյթին ռեժիմը շատ է վախենում Յունուար-Փետրուարի զարգացումներից եւ փորձում է այս ձեւերով կանխել արմատական ընդդիմութեան անխուսափելի միաւորումը:

Իսկ ամենացաւալին այն է« որ «հետազօտութեան» պատուիրատուներն իրենց քաղաքական խնդիրները լուծելու համար այնպիսի տուեալներ են տրամադրել «Գելափին»« որոնք վերջինիս ներկայացուցչին թոյլ է տալիս բացայայտօրէն ծաղրել մեր քաղաքական դաշտը՝ յայտարարելով« թէ «սա նման է նրան« երբ երկու մարդ անտառ չմտած՝ արդէն անտառում եղած սունկերի համար կռիւ են տալիս« չիմանալով անգամ« թէ որտեղ դրանք փնտռել եւ ինչպէս հաւաքել»: Իրականում Հայաստանի քաղաքական դաշտն այդքան յիմար չէ: Յիմարը նման պատուէր տուողներն ու դրանց արդիւնքներին հաւատացողներն են:

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**
**«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

# «7-Ի ԳՈՐԾԸ» ՈՒՂԱՐԿՈՒԵԼ Է ԵՐԵՒԱՆԻ ՔՐԷԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Մարտի 1-2-ին Երեւանում տեղի ունեցած զանգուածային անկարգութիւնների առիթով Լեւոն Տէր-Պետրոսեանի քաղաքական թիմի անդամ 7 ակտիւիստների նկատմամբ յարուցուած քրէական գործերը ուղարկուել են Երեւանի քրէական դատարան:

Հայաստանի դատախազութեան տարածած մամուլի հաղորդագրութեան համաձայն, նախաքննութեան ընթացքում ձեռք բերուած ապացոյցների հիման վրայ՝ մեղադրեալներ Ալեքսանդր Արզումանեանին, Յակոբ Յակոբեանին, Գրիգոր Ոսկերչեանին, Սուրէն Սիրունեանին, Շանթ Յարութիւնեանին, Միասնիկ Մալխասեանին, Սասուն Միքայէլեանին մեղադրանքներ են առաջադրուել Հայաստանի քրէական օրէնսգրքի 225-րդ յօդուածի 3-րդ եւ 300-րդ յօդուածի 1-ին մասերով՝ «սպանութեամբ զուգորդուած զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու» եւ «պետական իշխանութիւնը բռնութեամբ զաւթելու» համար:

Միասնիկ Մալխասեանին, ի լրումն վերը նշուած յօդուածների, մեղադրանք է ներկայացուել նաեւ 38-316-րդ յօդուածի 2-րդ մասով՝ ոստիկաններին դիմադրութիւն ցոյց տուող ամբոխի գործողութիւնները անձամբ ղեկավարելու համար:

Սասուն Միքայէլեանին, 225-րդ յօդուածի 3-րդ եւ 300-րդ յօդուածի 1-ին մասով առաջադրուած մեղադրանքներից բացի, ներկայացուել է մեղադրանք՝ Քրէական օրէնսգրքի 235-րդ յօդուածի 1-ին եւ 2-րդ մասերով՝ «ապօրինի զէնք կրելու» համար:

# ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆԸ ՀԱՑԱԴՈՒԼ Է ՅԱՅՏԱՐԱՐԵԼ

Դեկտեմբեր 2-ի առաւօտեան Նոյեմբերի 10-ից կալանքի տակ գտնուող Ֆրանսիայի քաղաքացի Սարգիս Հացպանեանը դիմում է ներկայացրել «Երեւան Կենտրոն» քրէակատարողական հիմնարկի պետին՝ տեղեկացնելով, որ նախորդ օրուանից հացադուլում է:

Արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական հիմնարկների վարչութեան մամուլի խօսնակ Արսէն Բաբաեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց նաեւ, որ ձեռնարկուել են բոլոր միջոցները «հացադուլում գտնուող կալանաւորի անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովելու համար»:

Հացադուլի միջոցով Հացպանեանը բողոքն է արտայայտում իր դէմ յարուցուած քրէական գործի դէմ: Նա, յիշեցնենք, մեղադրւում է Քրէական օրէնսգրքի 333 յօդուածի 2-րդ մասով (սուտ մատնութիւն):

## ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ



Թուրք եւ Ատրպէյճանցի նախարարներ Ալի Բաբաջան եւ Էլմար Մամեդյարով

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հայ-թուրքական սահմանի բացումն ու ղարաբաղեան հակամարտութեան լուծումը պէտք է լինեն համակարգուած: Այս երկու հարցերն իրարից անբաժան են», - Բաքւում ասել է Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը ադրբեջանցի իր գործընկեր Էլմար Մամեդյարովի հետ կայացած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

Ալի Բաբաջանը միաժամանակ հայ-թուրքական յարաբերութիւնները պայմանաւորել է թուրք-ադրբեջանական յարաբերութիւններով եւ ասել, որ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը դրական կ՚ազդի հայ-թուրքական յարաբերութիւնների վրայ.

«Հարցը կարգաւորելու համար պէտք է ձեռնարկել շօշափելի քայլեր, եւ Թուրքիան պատրաստ է աջակցել Ադրբեջանին»,-ասել է նա: Ալի Բաբաջանի խօսքով՝ կովկասում բոլոր հակամարտութիւնները պէտք է լուծուեն դիւանագիտական ճանապարհով եւ «Պէտք չէ, որ այդ խնդիրները թողնուեն ապագայ սերունդներին»:

Մինչ ասուլիսը Թուրքիայի եւ Ադրբեջանի արտգործնախարարները բանակցել են դէմ առ դէմ:

Նրանք քննարկել են ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ներկայ ընթացքը եւ Հելսինկիում դեկտեմբերի 4-5-ին նախատեսուած՝ ԵԱՀԿ արտգործնախարարների գագաթաժողովի շրջանակում Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի ԱԳ նախարարների եռակողմ հանդիպման հնարաւորութիւնը:

### ԵՒՐԱԴԱՏԱՐԱՆՆ ԱՅՍՕՐ ԵՐԵՔ ՎՃԻՌ Է ԿԱՅԱՑՐԵԼ ԸՆԴԴԷՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: «Ֆորում» իրաւունքի կենտրոնի ղեկավար, փաստաբան Տիգրան Տէր-Եսայեանը, ով 2003-ի նախագահական ընտրութիւնների եւ 2004 թուականի ապրիլեան դէպքերի առնչութեամբ մի շարք գործեր է ուղարկել Մարդու իրաւունքների եւրոպական դատարան, «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ Եւրադատարանն կայացրել է 3 վճիռ ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան:

«Եւրադատարանը հրապարակեց իր որոշումը, որով ճանաչեց 2003 թուականի նախագահական ընտրութիւններում վարչական կալանքի ենթարկուած Լավրենտի Կիրակոսեանի եւ Արման Մխիթարեանի իրաւունքի խախտում, եւ՝ 2004 թուականի ապրիլեան դէպքերի հետ կապուած վարչական կալանքի ենթարկուած Միասնիկ Թադեւոսեանի: Ըստ էութեան, [Մարդու իրաւունքների եւրոպական] կոնվենցիայի երեք յօդուածներով իրաւունքի երեք խախտումներ է ճանաչել»:

Ըստ փաստաբանի, Եւրադատարանը, բացի կոնվենցիայի երեք յօդուածներից, նշել է նաեւ հետեւեալը. - «Վարչական կալանքի ենթարկուած քաղաքացու իրաւունքի սահմանափակումը՝ վիճարկման հետ կապուած, բողոքարկման հետ կապուած, վարչական կալանքի ենթարկուածի պայմանների խախտում, այսինքն՝ այն պայմաններում, որտեղ որ նա գտնուել է վարչական կալանքի, եւ միւսը, որը վերաբերում է, ըստ էութեան, հնարաւորութիւն տալու բողոքարկման, վերջնական վճիռը կայացնելու տեսքով»:

Գործերից երկուսը Եւրադատարան էին ուղարկուել 2003, իսկ մէկը՝ 2004 թուականին:

«Փոխհատուցումը այսպէս է՝ 4500 եւրօ՝ բարոյական՝ իւրաքանչիւր գործով (տուրքերը հանած), եւ 3000՝ ծախսեր», - ներկայացրեց փաստաբանը:

Վարչական կալանքի ենթարկուած Հայաստանի Հանրապետութեան երեք քաղաքացիների արարքը ներպետական ատեաններում որակուել է որպէս խուլիգանութիւն, սակայն Եւրադատարանում, այսպէս կոչուած, զոհերի պաշտպանները պնդել են, որ Հայաստանի երեք քաղաքացիները հետապնդման են ենթարկուել իրենց քաղաքական հայեացքների պատճառով, քանի որ երեքն էլ պատկանել են տարբեր կուսակցութիւնների՝ Ազգային ժողովրդավարական Միութիւն, «Ազգային Միաբանութիւն» եւ Հայաստանի ժողովրդական կուսակցութիւն:

Փաստաբանի փոխանցմամբ, այժմ Եւրադատարանում գտնուող 2003-2004 թուականների նախագահական ընտրութիւններին եւ ապրիլեան դէպքերին առնչուող մի քանի տասնեակ գործերի թւում, բացի վարչականից կան նաեւ քրէական գործեր, որոնք գրառումների փուլում են:

### ԹԵԼԵԹՈՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ԳՈՒՄԱՐԸ 35 ՄԻԼԻՈՆ

Շարունակուած էջ 1-էն

գեւոր առաջնորդներ, քաղաքական եւ բարեսիրական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, դպրոցականներ եւ այլն:

Հիմնադրամի տարածած հաղորդագրութեան համաձայն հանգանակուած գումարները հետեւեալն են՝ Լոս Անճելըս՝ շուրջ 1 միլիոն 300 հազար տոլար, Ֆրանսա՝ 1 միլիոն 500 հազար, Թորոնթօ՝ 250 հազար, Լիբանան՝ 200 հազար, Նիւ Եորք՝ 200 հազար, Մեծ Բրիտանիա՝ 200 հազար, Մոնթրէալ՝ 130 հազար, Արժանթին՝ 100 հազար, Գերմանիա՝ 85 հազար, Աւստրալիա՝ 50 հազար, Հոլանտա՝ 40 հազար, Զուիցերիա՝ 33 հազար, Յունաստան եւ Կիպրոս՝ 40 հազար:

Ռուսաստանաբնակ գործարար Սամուէլ Կարապետեան յայտարարած է 15 միլիոն տոլար նուիրատուութիւն, որ պիտի օգտագործուի Ստեփանակերտի մէջ հիւանդանոցի կառուցման:

### ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴԷՄ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Թբիլիսի Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդը մտահոգութիւն է յայտնել Վրաստանում Վիրահայոց թեմի եւ հայկական եկեղեցիների նկատմամբ դրսեւորուող ոտնձգութիւններով եւ դատապարտել «քրիստոնէութեան ոգուն, եղբայր ժողովուրդների բարեկամութեանն անյարիր քայլերն ու գործողութիւնները»:

Վիրահայոց թեմի խնդիրներին, մասնաւորապէս՝ հայկական եկեղեցիների վերադարձման հարցերին եւ Թբիլիսիի Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցու նկատմամբ հերթական ոտնձգութեան եւ հայկական գերեզմանների պղծման դէպքին Գերագոյն հոգեւոր խորհուրդը անդրադարձել է երէկուայ նիստում:

Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի փոխանցմամբ՝ իրավիճակի մասին զեկոյցով է հանդէս եկել Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը տեղեկացրել է, որ նկատի ունենալով այն, որ վրաց իշխանութիւնների եւ Վրաց եկեղեցու կողմից որեւէ ընդառաջում չի կատարւում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիմումներին, Հայ առաքելական եկեղեցին շարունակելու է այս հարցը մշտապէս յանձնել միջազգային հանրութեան ուշադրութեանը՝ յոյսով, որ ներդրուած համընդհանուր ջանքերի շնորհիւ բարւոք լուծում կ՚ստանան վիրահայութեան ազգային-եկեղեցական կեանքում առկայ խնդիրները:

Այնուհետեւ Գերագոյն հոգեւոր խորհուրդը հանդէս է եկել կոչով, որում, մասնաւորապէս, ասուած է. - «Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, խորապէս մտահոգուած Վրաստանում Վիրահայոց թեմի եւ հայկական եկեղեցիների նկատմամբ դրսեւորուող ոտնձգութիւններով, դատապարտում է քրիստոնէութեան ոգուն, եղբայր ժողովուրդների բարեկամութեանն անյարիր քայլերն ու գործողութիւնները: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը կոչ է ուղղում Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զաւակներին՝ զօրավիգ լինել վիրահայութեանը իրենց ջանքերում եւ նախանձախնդիր պայքարում ի պաշտպանութիւն հայկական եկեղեցիների եւ հայրենական իրենց սրբութիւնների»:

Նոյեմբերի 16-ին Թբիլիսիի Սուրբ Նորաշէն եկեղեցու նկատմամբ հերթական ոտնձգութիւնն էր իրականացուել: Վրաց հոգեւորական Տարիէլ Սիկինչելաշվիլին ու իր կողմնակիցները, կիրառելով շինարարական ծանր տեխնիկա, տեղահանել էին եկեղեցու բակում գտնուող՝ Միքայէլ եւ Լիդիա Թամամշեւների շիրմաքարերը: Շիրմաքարերը իրենց տեղն են վերադարձուել միայն վրաց Պատրիարքի միջամտութիւնից յետոյ:

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՈՒԱԶԵԼ ԵՆ ՏՆԵՐԻ ԳՆԵՐԸ, ՆԱԵՒ ԳՆՈՐԴՆԵՐԸ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքով Հայաստանում անշարժ գոյքի շուկայում գների 15 տոկոս նուազում է արձանագրուել, սակայն վիճակագրութիւնը փաստում է, որ շուկայում զգացւում է նաեւ գնորդների պակաս: Այս մասին Panorama.am-ին յայտնեցին Հայաստանում գործող անշարժ գոյքի մի քանի գործակալութիւններ:

2008թ. երկրորդ եռամսեակում հանրապետութիւնում անշարժ գոյքի նկատմամբ իրականացուել են 41.495 գործարք՝ 2008թ. առաջին եռամսեակի համեմատ աճել է 18.3%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսեակի համեմատ՝ 15.2%-ով: Անշարժ գոյքի օտարման գործարքների քանակի 32.9% արձանագրուել է մայրաքաղաքում, իսկ օտարուած անշարժ գոյքի 32.7% բազմաբնակարան բնակելի շէնքերի բնակարաններ են:

Երրորդ եռամսեակում հանրապետութիւնում անշարժ գոյքի նկատմամբ իրականացուել են 41.210 գործարք, 2008թ. երկրորդ եռամսեակի համեմատ նուազելով 0.7%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսեակի համեմատ՝ 0.03%-ով: Անշարժ գոյքի օտարման գործարքների քանակի 32.5% արձանագրուել է Երեւան քաղաքում, իսկ օտարուած անշարժ գոյքի 32.8% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շէնքերի բնակարաններ:

Երեւան քաղաքում Հոկտեմբերին բազմաբնակարան բնակելի շէնքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշուարկով, շուկայական միջին գները 2008թ. Սեպտեմբերի համեմատ նուազել են 0.3 %-ով: Հոկտեմբերին մարզերում, բացառութեամբ Երեւանը, վաճառուել է բազմաբնակարան բնակելի շէնքերի 426 բնակարան, որոնց քանակը 2008թ. Սեպտեմբերի համեմատ աճել է 9.8%-ով, իսկ 2007թ. Հոկտեմբերի համեմատ նուազել՝ 20.7%-ով:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 20-ԱՄԵԱԿ

# ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 20ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

***ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ***

*Դեկտեմբեր 7, 1988:*

*Վստահ եմ այս թուականը, երկրաշարժէն քսան տարիներ ետքն ալ, տակաւին թարմ, ցնցիչ եւ ցաւալի կը մնայ ոչ միայն անոր քանդիչ ազդեցութեան ենթարկուած զանգուածներու մօտ, այլ նաեւ ամբողջ հայ ժողովուրդին, որ վստահ եմ հանգամանօրէն պիտի նշէ այդ տխուր թուականը:*

*Այդ տխրահռչակ օրը, անգամ մը եւս հայ ժողովուրդը ապրեցաւ ողբերգութիւն մը իր երկարամեայ պատմութեան ընթացքին: Այսօր, դէպքէն 20 տարիներ ետք, տակաւին կը յիշենք զոհերու թիւը, պաշտօնապէս ներկայացուած 26,000-ով, իսկ յատկանշուած, անհատական եւ ազգային գետնի ամբողջ շրջանի մը քանդումով, հազարաւորներու անտունիներու վերածումով, ընտանիքներու որբացումով, տակաւին ուրիշ շատերու անկելացումով (disabled), մէկ խօսքով Հայաստանի մարդկային, նիւթական եւ ազգային-քաղաքական տագնապը, «աղետի գօտի» նկարագրութեան տակ:*

*Այսպէս, մէկ դարու ընթացքին, ճակատագրի ինչ ծանր հարուածներ ժողովուրդի մը գլխուն, ժողովուրդ, որ զարմանալիօրէն, իր մէջ զարգացուցած եւ կամ ժառանգականօրէն սերունդներ փոխանցած է դիմադրելու, տոկալու եւ վերապրելու վճռակամութիւնը: Պատկերացուցէք պահ մը, երբ այդ օրերու Խորհրդային Միութեան ղեկավար Միքայէլ Կորպաչեւ, կարճ կտրելով Ամերիկա տուած իր պաշտօնական այցելութիւնը, կ՚այցելէ երկրաշարժի վայրը, իր օգնութիւն ը խոստանալու, եղան հայեր, որոնք ապրելով հանդերձ իրենց ողբերգութիւնը, համարձակութիւնը ունեցան իրեն հարցնելու թէ երբ եւ ինչպէս պիտի լուծէր ղարաբաղեան հարցը: Անշուշտ Կորպաչեւ դժգոհ մնաց իրեն ուղղուած այդ հարցումէն, մանաւանդ ողբերգական այդ պայմաններու տակ: Նաեւ եղած էին պահեր, կարեւոր մէկ շրջանի «աղետի գօտի» նկարագրումով:*



*Այս որքա՜ն դաժան եղած է հայ ժողովուրդի ճակատագիրը դարերու ընթացքին: Տակաւին մեզի մօտ, միայն 20րդ դարու ընթացքին, հայ ժողովուրդը ենթարկուած է, յստակօրէն բնորոշուած, երեք մասսայական ողբերգութեանց, որոնց երեքն ալ տակաւին կը սպասեն իրենց ամոքման, դարմանման, եւ նիւթական թէ բարոյական հատուցումներու ենթարկման:*

*Որո՞նք են այդ երեք ողբերգութիւնները.*

*- 1915-ի ցեղասպանութեան փորձը հայ ժողովուրդին վրայ, պետականօրէն ծրագրուած եւ գործադրուած Օսմանեան կառավարութեան կողմէ:*

*- Ղարաբաղեան մարդկային-քաղաքական տագնապը, իր Սումկայիթով եւ այլ շրջաններու հայութեան ջարդով եւ տեղահանութեամբ, եւ ղարաբաղեան հարցի ստեղծումով:*

*- Կիւմրիի, Սպիտակի եւ բազմաթիւ այլ գիւղերու երկրաշարժի ենթարկումը, եւ անոր պատճառած երբ կիւմրեցին պահած էր հիւմորի, զուարթախորհութեան տրամադրութիւնը: Աշխարհով մէկ, հայ ժողովուրդի օգնութեան հասնողներու մէջ, կային նաեւ ֆրանսացիներ, որոնք իրենց շուներու միջոցաւ, փլատակներու տակէն մարդիկ դուրս հանելու գործին նուիրուած էին, ուրեմն ազատագրուող կիւմրեցի մը իր զարմանքը պիտի յայտնէր, ըսելով թէ երկրաշարժը ինչպէս գինք Փարիզ հասցուցած էր, հաւանաբար ենթադրելով որ երբ ֆրանսերէն կը լսես, ինքզինքդ Ֆրանսա կը կարծես...*

***

*Ինչո՞ւ այդքան շատ զոհեր պատճառեց երկրաշարժը: Հիմնականին մէջ, այդ շրջանի խորհրդային կարգերու տակ գործադրուող շինարարական փտած եւ խոցելի քաղաքականութիւնն էր պատասխանատու, որուն իբրեւ արդիւնք, շէնքերը փուլ եկան երկրաշարժային պահանջուած կառուցողական տուեալներու բացակայութեան պատճառաւ: Մէկ խօսքով, շինարարա-*

*Շար.ը էջ 19*

# ՍԱՆԱՍԱՐ ՈՒ ՊԱՂՏԱՍԱՐ ԵՒ ԳԻՒՄՐԻԻ ԱՂԷՏԻ ԳՕՏԻՆ

***ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ***

Ողորմի՛ ասենք մեր հայոց Գագիկ արքային,

Ասենք ողորմի դիւցազուն սէգ Սանասարին,

Ասենք ողորմի իր ախպեր ծուռ Պաղտասարին

Ու հազար, հազար ողորմի հայոց նախնիքին:

***Գիւմրիի ահաւոր երկրաշարժի քսանամեակի առթիւ գրուած այս յօդուածը ի՞նչ կապ ունի մեր ազգային դիւցազնավէպի՝ Սասնայ Ծռերու առաջին ճիւղի հերոսներէն՝ Սանասարի ու Պաղտասարի հետ: Բացատրենք: Երբ մեր հերոսները Մըսըրէն Հայաստան վերադառնալով կը մտադրեն իրենց բերդաքաղաքը կառուցել, Պաղտասարը հարց կու տայ իր եղբօր.***

***- Առաջ մեր բե՞րդը շինենք, թէ ոչ աղքատ ժողովուրդի տուները:***

***Սանասար կը պատասխանէ:***

***- Առաջ անոնց տուները, յետոյ մեր բերդը:***

***Ու կը սկսին շինել: Անոր որ տունը կը շինէին, այդ տան մէջ հաց կ՚ուտէին, ու տանտիրոջ տաշտն ու մաղը կը կախէին «օճորքից» (առաստաղէն): Ու երբ ամբողջ ժողովուրդը իրենց տուները ստացան, մեր հերոսները անցան իրենց բերդի շինարարութեան:***

***Իր ազգային ակունքներուն հարազատ ամէն մէկ հայ առաջնորդի համար, Սանասարի ու Պաղտասարի այս արարքը փայլուն օրինակ պէտք է հանդիսանայ, թէ ինչպիսի՞ հզօր հիմերու վրայ պէտք է խոյանայ հայրենակերտման գործընթացը: Առաջնորդը պէտք է գիտակցի, որ որքան բարօր է ժողովուրդը, այնքան հաստատուն են պետականութեան հիմքերը: Առաջնորդը պէտք է գիտակցի, որ իր հզօրութեան արժեչափը ոչ թէ ժողովուրդին վրայ բռնանալն ու զայն արհամարհելն է, այլ անոր ծառայելով, անոր վստահութիւնը սիրաշահելուն մէջ է: Իր ազգի անցեալին գիտակ ու ապագայով մտահոգ մէկն մի առաջնորդի համար, հայրենակերտման հաստատ չափանիշ է այդ:***

Ողորմի՛ ասենք Գիւմրիի երկրաշարժի զոհերուն.

Ու դառնանք չասենք ողորմի Ռոպերթ Քոչարեանին

Չասենք ողորմի չարագործ Վարդան Ղուկասեանին,

Ասենք ողորմի ազնուասիրտ Աջապահեան առաջնորդին:

***Այո՛, արդէն քսանամեակ մը անցած է Գիւմրիի ահաւոր երկրաշարժէն, որ շէն քաղաքը վերածեց աւերակներու եւ աղէտի գօտիի, խլելով բազմահազար զոհեր: Հակառակ յաճախակի հաւաստիացումներու, թէ «աղէտի գօտի» հասկացողութիւնը կարելի է վերացած համարել, աւելի քան 6000 ընտանիներ տակաւին զուրկ են մարդավայել բնակութեան տուներէ: Այս իրավիճակը խարան մըն է դրոշմուած բոլոր անոնց ճակատներուն, որոնք Գիւմրիի թէ Երեւանի մէջ, անձնական ճոխ ապարանքներ ու «էլիտար» շէնքեր կը կառուցեն, ի հաշիւ ժողովուրդի իրաւունքներու անտեսման թէ յափշտակման: Գիւմրիի քաղաքապետ Վարդան Ղուկասեան, երրորդ անգամ ըլլալով անիրաւօրէն ու խարդախութեամբ ինքզինք կը պարտադրէ ժողովուրդին վրայ: Իր ամբարտաւան ընթացքը գինք կը մղէ մինչեւ անգամ պարսաւելու Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Արք. Աջապահեանին, անոր պաշտօնանկութիւնը պահանջող ստորագրահաւաք կազմակերպելով: Առաջնորդ մը որ, արժանի իր կոչումին, կանգնած է իր ժողովուրդի կողքին, քաջաբար պաշտպանելով անոր շահերը եւ քօղազերծելով զայն շահագործողները: Վարդան Ղուկասեանի նման ոգիի սովէ տառապող մարդիկ չեն կրնար հանդուրժել ազնուասիրտ ու խղճամիտ առաջնորդներու ժողովրդանուէր ծառայութիւնը: Ասիկա ցոյց կու տայ թէ Ղուկասեանի նմանները որքա՜ն հեռացած են մեր ազգային ակունքներէն ու պարպուած հայրենասիրական ու ազգասիրական զգացումներէ: Այդպիսիները հայրենաքանդ են: Աւելի քանդիչ, քան երկրաշարժը:***

***Այո՛, երկրաշարժը աւերեց տներ ու դպրոցներ, մթագնեց հոգիներ, բայց պէտք չէ սասանէ մեր հաւատքն ու պայքարելու կամքը: Հաւատալ լաւի յաղթանակին ու պայքարիլ վատի դէմ: Հաւատալ իսկական ազգասէրին ու դիմակազերծել պատեհապաշտը: Հաւատալ ու պայքարիլ ներկայի Սանասարներու, Պաղտասարներու կողքին, յանուն հայրենի ժողովուրդի ու հայրենիքի բարգաւաճման:***


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**
**www.massisweekly.com**



ՏԵՍԷ՛Ք
ԵԹԷ
BANKRUPTCY-Ի
ՕՐԷՆՔՆԵՐԸ
Կ՚ՕԳՆԵՆ ՁԵԶԻ,
ՁԱՆԳԱՀԱՐԵՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 20-ԱՄԵԱԿ

# ՎԵՐՅԻՇԵԼՈՎ 1988 ԹՈՒԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՂԵՏԸ

*ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ*
*ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄՈԿՈՍ*
*(Սպիտակի երկրաշարժի համալիր արշաւախմբի եւ շտաբի ղեկավար)*



Անցաւ քսան տարի այն չարաբաստիկ օրուանից երբ ՀՀ Հիւսիսում տեղի ունեցաւ ուժեղ երկրաշարժ՝ պատճառելով մեծ աւերածութիւններ: Զոհերի թիւը հաշուըուեց տասնեակ հազարներով: Անօթեւան մնացին աւելի քան կէս միլիոն մարդ, վիրաւորուեցին եւ խեղանդամ դարձան շատ շատերը:

Քսան տարին, ի հարկէ, շատ ժամանակ չէ այդպիսի դժոխային աղէտը եւ զոհերին մոռանալու, կորուստների հետ հաշտուելու համար: Այո, չմոռացուեցին:

Քսան տարին, սակայն, քիչ ժամանակ չէր անօթեւան մարդկանց բնակարաններով ապահովելու եւ աղէտի գօտին վերականգնելու համար: Ցաւոք սրտի բազմահազար ընտանիքներ դեռեւս մնում են ժամանակաւոր կացարաններում, իսկ աղէտի գօտին ոչ լրիւ վերականգնուած:

Քսան տարին, վերջապէս, բաւարար ժամանակ էր երկրաշարժի գօտու եւ յարակից տարածքների երկրաշարժավտանգաւորութեան աստիճանը ճշտելու եւ աւերածութիւնների պատճառները որոշելու համար:

Այսօր անվարան կարելի է ասել, որ երկրաշարժավտանգաւորութեան աստիճանը ճշտուեց, իսկ աւերածութիւնների պատճառներից շատերը որոշուեցին՝ ի շնորհիւ ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսայի, Ճապոնիայի եւ այլ երկրների երկրաշարժագէտների համալիր հետազօտութիւնների: Դրանց արդիւնքները ամփոփուած են բազմաթիւ գիտական հաշուետուութիւններում, զեկուցագրերում եւ գիտական յօդուածներում, գրքերում, մենագրութիւններում: Ի յիշատակումն դրանցից մի քանիսի նշենք, որ 7.1 մագնիտուդայով գլխաւոր հարուածը, ըստ էութեան, միաւորում էր իրարից մի քանի վայրկեան ուշացումով եւ որոշակի հեռաւորութեան վրայ տեղի ունեցած երեք հզօր հարուածների գումար, որոնցից առաջինի սեյսմիկ էֆեկտի 75 տոկոսը բաժին էր ընկնում վերտիկալ կազմիչին: Շիրակի գօտու ջրով յագեցած նստուածներում տեղի ունեցաւ սեյսմիկական ալիքների տարածման արագացման աճ, իսկ բարձրահարկ չէնքերում՝ ուժեղ արտայայտուած ռեզոնանս: Արդիւնքում այստեղ աւերածութիւնները աւելի մեծ էին, քան երկրաշարժի էպիկենտրոնական մասից հաւասար հեռաւորութեան կամ աւելի մօտ գտնուող բնակավայրերում (Վանաձոր, Դիլիջան եւ այլն): Բացի դրանից երկրաշարժի գօտու աւերուած չէնքերից շատերը կառուցուել էին առանց բաւարար խորութեամբ ուսումնասիրելու գրունտների եւ նրանց վրայ կա-



ռուցուած չէնքերի սեփական տատանումների փոխադարձ համապատասխանութեան հարցերը:

Երկրաշարժի հետեւանքով երկրակեղեւի վերին հորիզոններում առաջացան բեկուածքներ, որոնցից մեծագոյնը ունի 37 կմ երկարութիւն: Նրա Հիւսիս-արեւելեան թեւը բարձրացել է 2.1 մեթր եւ կողաշարժուել է 1.6 մեթրի չափով: Դրանցից շատերը նախկինում տեղի ունեցած երկրաշարժերի ժամանակ առաջացած բեկուածքների ժառանգորդներ են:

Երկրաշարժի էպիկենտրոնական մասում եւ յարակից տարածքներում գլխաւոր հարուածներին նախորդեցին եւ ուղեկցեցին ռադիոակտիւ եւ այլ գազերի արտահոսքերի մեծացում՝ արտայայտուած ջրային եւ օդային միջավայրերում: Ի յայտ բերուեցին եւ մեկնաբանուեցին գրունտային ջրերի մակարդակների փոփոխութիւններ, որոշ աղբիւրներ չատրուանեցին, յայտնաբերուեցին հանքային ջերմաղբիւրների ջերմաստիճանի բարձրացում, հանքային ջրերի քիմիական կազմի փոփոխութիւններ, արտայայտուած նրանցում լուծուած քիմիական տարրերի եւ գազերի պարունակութիւնների կտրուկ, կարճատեւ տատանումների ձեւով: Առանձնապէս տպաւորիչ են ռադիոակտիւ գազերից ռադոնի, տարոնի եւ այլ գազերի պարունակութիւնների տատանումները: Դրանցով պայմանաւորուած կենսամիջավայրի փոփոխութիւնները իրենց հերթին պայմանաւորել էին որոշ կենդանիների, ձկների, սողունների, բոյսերի եւ նոյնիսկ մարդկանց կենսագործունէութեան արտակարգ փոփոխութիւններ եւ անոմալիաներ:

Սպիտակի 7 Դեկտեմբերի 1988 թ. երկրաշարժից յետոյ ՀՀ կառավարութեան յանձնարարութեամբ եւ ՀԳԱԱ նախագահութեան որոշմամբ հանրապետութեան տարածքը ենթարկուեց սեյսմիկ կամ երկրաշարժային շրջանցման: Սոյն տողերի հեղինակի ղեկավարութեամբ լաւագոյն հայ սեյսմաբանները կազմեցին ՀՀ տարածքի երկրաշարժային նոր քարտեզ՝ հիմնուած նորագոյն երկրաֆիզիքական, սեյսմաբանական, երկրաբանական, տեկտոնական, երկրաքիմիական, տիեզերական եւ սէրոհանութային տուեալների վերամշական եւ համալիր ինտեգրման վրայ: Քարտեզը քննարկուեց եւ հաստատուեց հանրապետութեան Պետշինում եւ դրուեց յետագայ շինարարական աշխատանքների նախագծումների պահանջների հիմքում: Համաձայն այդ քարտեզի այստեղ 7 բալանոց տարածքներ այլեւս չկան, իսկ 8 բալանոց տարածքների ընհանուր մակերեսը չի գերազանցում 10-15 տոկոսը հանրապետութեան ընդհանուր տարածքի: Մնացած 85-90 տոկոսը գնահատուել են 9 եւ աւելի բալականութեան վտանգաւորութեան տարածքներ: Դա նշանակում է որ այստեղ, ներառեալ քաղաքների որոշ բնակավայերի տարածքները, ներփակում են խիստ սեյսմավտանգաւոր եւ շինարարութեան համար ոչ նպատակայարմար տարածքներ: Խնդիր է դրւում ձեռնարկել սեյսմավտանգաւորութեան նոր գնահատականներին չբաւարարող առկայ կառոյցների ամրացման, վերակառուցման եւ նոյնիսկ քանդման աշխատանքներ:

Սպիտակի երկրաշարժի գիտական մոդելներից մէկի համաձայն այն կապուած Հիւսիս-Անատոլիական խորքային բեկուածքի Գիւմրի-Վանաձոր սեգմենտի եւ մերձմիջօրեական բեկուածքային գօտու հատման հանգուցային մասի հետ եւ ունի տեկտոնումագմատիկական բնոյթ: Տեկտոնական շարժումները ըստ այդ մոտելի, ուղեկցել եւ ուղեկցուել են մագմատիկ զանգուածի ներկայ թքումով՝ առաջացնելով եւրտիկալ տատանումներ եւ այլ երեւոյթներ, որոնք բնորոշ չեն սովորական տեկտոնական երկրաշարժերին: Այս մոտելվարկածը հնարաւորութիւն է տա-

*Շար.ը էջ 19*



# ԱՂԵՏԻ ԳՕՏՈՒ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

*ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ*

*Երկունքի մէջ էր հայոց աշխարհը: Նա պայքարում էր նոր, ազատ կեանքի համար, Արցախի փրկութեան համար: Խորհրդային ռազմական ինքնաթիռները, ուղեթիռները, ճախրում էին Հայաստանի երկնքում: Հրասայլերը լցրել էին Երեւանի փողոցները: Պարեկութիւն էին անում զինուորները: Ժողովուրդը լուռ, զուսպ, լաւատեսութեամբ լի ու վճռական քայլում էր մայթերի վրայ: Հակառակ ակնյայտ լարուածութեան զինուորները քաղաքացիների վրայ չէին կրակում: Արիւն չէր թափւում:*

*1988, Դեկտեմբեր 7. Կիրակի առաւօտ յանկարծ ցնցուեց Երեւանի մեր տունը: Ցնցումը երկու ուղղութեամբ էր՝ վեր ու վար եւ աջ ու ձախ: Պատուհանի, դռների փեղկերը եւ առաստաղից կախուած ջահերը սկսեցին օրօրուել: Էլեկտրական հոսանքը անջատուեց:*

*Մի քանի րոպէ անց քաղաքը լցուեց սարսափահար ժողովուրդի կանչերով, աղաղակներով, աղօթքներով: Երկրաշարժ, երկրաշարշարժ... Կարծես մթնեց քաղաքը: Ժամ առ ժամ աւելի սարսափելի էին դառնում Լենինականից, Սպիտակից եւ Կիրովականից հասած լուրերը: Մեծանում էին զոհուածների թիւը, որը տատանւում էր քսան հազարից հարիւր քսան հազարի միջեւ: Թափւում էր հայ արիւնն ու արցունքը: Խիստ տպաւորիչ էր Նորին Սուրբ Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Վեհափառի հեռուստատեսային ելոյթը:*

*Աւելի ուժեղացաւ Ղարաբաղեան Շարժման ընթացքում մշակուած ժողովրդական համերաշխութիւնն ու միասնականութիւնը: Հարիւրաւոր գիտնականներ, ուսանողներ, բանւորներ ու ծառայողներ մեկնեցին երկրաշարժի գօտի՝ փլատակների տակից մարդկանց դուրս հանելու, վիրաւորներին օգնելու, ժողովուրդին ջուր ու սնունդ մատակարարելու համար: Նրանց շարքում էին բազմաթիւ վրացահայեր ու ատրպէյճանահայեր: Իմ փեսաները՝ Դոկտ. Արմէն Յովհաննիսեանն ու ճարտարագէտ Արմէն Բեգլուեանը յաջորդ օրն իսկ մեկնեցին աղէտեալ գօտի: Տասը օր յետոյ նրանք վերադարձան նիհարած, դեղնած ու հոգեպէս փոթորկած: Դեփրեսիայի մէջ էին: Իրենց հետ բերին երկրաշարժի գօտում ստեղծուած նորագոյն մանրավէպերը, որոնք արտացոլում էին հայու ներաշխարհի հարստութիւնը, կամային բարձր յատկանիշներն ու ինքնատիպութիւնը: Ես չկարողացայ մեկնիլ, քանի որ սարսափելի արկածի հետեւանքով անկողինին գամուած էի:*

*Նոյն գիշերը սկսեցին հնչել մեր հեռախօսի զանգերը: Սփիւռքահայ իմ բարեկամներն էին զանգահարում ԱՄՆ-ից, Քանատայից, Արժենթինայից, Ֆրանսայից, Լիբանանից: Առաջին օրերին նրանց հարցերը առնչւում էին բուն երկրաշարժին: Երբ նրանց երկրի հաղորդակցման միջոցները սկսեցին բաւարարել նրանց հետաքրքրութիւնը, արմատապէս փոխուեց խօսակցութեան նիւթը: Նրանք առաւելաբար հարցնում էին թէ ինչպէս կարող են լաւագոյնս օգտակար լինել: Ես շեշտեցի, որ նախ եւ առաջ անհրաժեշտ է հաստատել հայութեան միասնականութիւնը եւ ցուցաբերել իրենց սէրն ու նուիրումը: Անհրաժեշտ գտայ գործողութիւնները մի անգամից սկսել եւ առայժմս հերթականութիւն չհաստատել: Անմիջապէս սկսել դրամահաւաքը, տաք հագուստների ու դեղերի առաքումը, մասնագէտ կամաւոր բժիշկների գործուղումը: Շուտով Ամերիկայի իմ բարեկամները տեղեկացրին, որ իրենց ամերիկացի բարեկամները եւս նուիրուած են Հայաստանի երկրաշարժից տուժածներին օգնելու գործին: Օր օրի մասնագիտական ճշգրտումներ ու լրացումներ էին մտցւում ցուցակներում: Շուտով մեր բնակարանը դարձաւ տեղեկատուական գրասենեակ եւ սփիւռքահայ բժիշկների ու հոգեբանների ժամադրավայր:*

# ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 20-ՐԴ ՏԱՐԻՆ

*Ն. ՏԷՐԵԱՆ*

*Լրացաւ 20 տարին երբ բնութիւնը մէկ ակնթարթում ցնցեց, աւերեց եւ հողակոյտի վերածեց մեր հայրենիքից մի զգալի տարածք եւ հազարաւոր զոհեր խլեց: Բազմաթիւ քաղաքներ, գիւղեր, աւաններ որոնք կառուցուած ու չէնացուած էին մեր ստեղծագործ եւ չարքաշ ժողովրդի ձեռքերով, մի քանի րոպէների ընթացքում դարձան աւերակ, դարձան գերեզման մեր աշխատունակ ժողովրդի զաւակների համար:*

*Որքա՜ն զոհեր մնացին անշիրիմ, անթաղ, ոչ մի հետք ու նշոյլ չթողնելով իրենցից: 1988 թուի Դեկտեմբերի 7-ը մնացել եւ կը մնայ մեր յիշողութիւնների մէջ, որպէս ողբերգական սեւ եւ տխուր մի էջ:*

*Աշխարհի բոլոր ժողովուրդները օգնութեան ձեռք երկարեցին մեր աղէտեալ հայրենիքին ու ժողովրդին, մասամբ թեթեւացնելով մեր ահաւոր վիշտը եւ բալասան եղան մեր վէրքերին: Ամբողջ սփիւռքը մէկ մարդու պէս ոտքի կանգնեց եւ աշխարհի չորս ծագերից օգնութեան կարաւանները հասան աղէտեալ գօտի: Ամէն մարդ, իր կարողութեան սահմաններում նուիրաբերեց, աւերուածութիւնները վերակառուցելու բարի ցանկութեամբ:*

*Հայազգի աշխարհահռչակ երգիչ մեծ հայրենասէր Շարլ Ազնաւուրը, «Լինսի» հիմնարկը, նրա ազնիւ տնօրէն Քըրք Գրիգորեանը ամենակարեւոր դերն ունեցան երկրաշարժի հետքերը վերացնելու նորանոր կառոյցներ ստեղծելու համար:*

*Սակայն պիտի խոստովանել որ 20 տարիներ անց, դեռ հարիւր տոկոսով չեն վերաշինուել երկրաշարժի աւերուածութիւնները եւ ըստ պաշտօնական պատասխանատուների հաղորդումների, աղէտի գօտում կան բազում անյարմար տնակներում ապրողներ, որոնք զրկուած են կենցաղի ամենատարրական միջոցներից: Զօրավիգ կանգնենք եւ յաղթահարելով դժուարութիւնները Հայաստանից մէկ անգամ ընդմիշտ վերացնենք աղէտի գօտի չարաբաստիկ մակդիրը: Ամբողջ 20 տարիներ թիթեղէ տնակներում ապրելը բաւական է մեր հազարաւոր հայրենակիցների համար:*



## ԱՍՔ՝ ԿԵՑՈՒԹԵԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԿԱՄՔԻ...

*«Դե՛հ եկ վարդապետ,*
*ու մի խենթացիր...»*
*«Մենք կանք, կը մնանք ու կը շատանանք...»*
**Պ. Սեւակ**

Աղէտը եկաւ
Ու տարաւ իր հետ բիւրաւոր զոհեր,
Կեանքեր թանկագին
Յոգիներ անգին.
Քանդեց, աւերեց մեր տունն ու տեղը,
Քաղաքնե՜ր, գիւղե՜ր...
Բիւրեր մնացին
Անտուն բնաւեր,
«Տօ՛ լաճ տնաւեր...»:
Աղէտը եկաւ,
Երկինք ու երկիր խառնուեցին իրար,
Ո՞նց պիտ պաշտպանուել,
Չորս կողմ հազար ցաւ.
Այս մէկն էլ եղած
Մեր բիւր ցաւերին
Բուռ աւելացաւ:
Տաշուած ու յղկուած,
Երկինք խոյացած
Վարդագոյն տուֆը
Շիրմաքար դարձաւ...
Բայց ժողովրդիս կամքը պողպատ է,
Նա գիտէ, գիտէ
Ցաւին ոնց պիտի
Տոկալ, դիմանալ
Քչով գոհանալ,
Չյուսահատուել ու չխենթանալ:
Նա գիտէ ինչպէս
Վերանորոգուել ու թափ տալ փոշին
Խենթ երկրաշարժի,
Վերանորգել տները քանդուած,
Վերակառուցել
Շէներն աւերուած,
Ինչպէս Դաւիթը հօր վանքը շինեց
Նորից ցած իջաւ,
Մարութայ սարից...
Այսօր մեր մեծ խենթ
Սասունցու նման
Քարեր կը բերենք մեր սէգ սարերից,
Աւերուածները կը շինենք նորից,
Կ՚ապրենք, կը մնանք
Ու կը բազմանանք... Այսպէս է հայը,
Կոփւում է ցաւից, Խորշում է դաւից,
Դառնում է անուր
Պողպատ ամրակուռ...
Այսպէս է հայը,
Դարերի երթում որքա՜ն է խոցուել,
Յիծուել, հալածուել, կիսուել՝ դառել կէս,
Բայց եւ ապրել է իր մեծ նախահօր՝
Իր Մասիսի պէս...

## ԵՍ ՔԵԶ Ի՞ՆՉ ԿՈՉԵՄ..

### ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Դեկտեմբերի եօթ
Դու ընդամէնը տասներկու տառ ես
Մեր պատմութեան մէջ:
Ասա քո ողբը ինչպէ՞ս չյիշեմ:
Յիշեմ նոր տարի՞
Խինդ, բերկրանք բերո՞ղ
Նոր կեանք պարգեւո՞ղ
Թէ դժնդակ օր...
Ա՜խ ես չգիտեմ
Ի՞նչ պիտի կոչեմ,
Դու »Մայրերի Տօ՞ն«
Թէ մանուկների
Բերկրալից մի օր,
Թէ ծեր ու մանուկ,
Աիել ու ջահել
Սիրող սրտերի
Յոյսի փառատօն:
Որոնք մնացին
Փլատակների ու քարերի տակ...
Ես քեզ ի՞նչ կոչեմ,
Որ մէկ վարկեանում
Դու խորտակեցիր
Մի ամբողջ աշխարհ,
Խիղճ ու օրէնքը յաւէտ մոռացած..
Քեզ ինչպէս նայեմ,
Դեկտեմբերի եօթ,
Աստուած է վկայ ես կ՚ուզեմ, կ՚ուզեմ,
*1895 թուականի Նոյեմբերին արդէն Զուիցերիոյ մէջ լոյս կը տեսնէ Թուրքիոյ մէջ հայկական կոտորածներու վերաբերեալ յօդուած մը* Gazette de Lausanne *եւ* Journal de Geneve *թերթերուն մէջ: 1895 թուականի Նոյեմբեր 16-ին,* Journal religieux des eglises independantes de la Suisse Romande *թերթը կը հրատարակէ ցիւրիխաբնակ փաստէօր Է. Ժագարի յօդուածը «Թուրքիոյ մէջ հայերու դէմ նոր կոտորածներ» խորագրին ներքոյ, ուր կը հնչեն հայանպաստ հաւաքներու առաջին կոչերը: Նոյն թերթը 28 Դեկտեմբեր 1895ին, փրոֆ. Ժորժ Կոտէի կողմէ կը տպագրէ ուրիշ յօդուած մը՝ «Կոտորածները Հայաստանի Մէջ» վերնագրով, որ իր միջի այլոց կը դառնայ առաջինը այս նիւթին անդրադարձող ամբողջ յօդուածաշարքի մը:*



*Անթոնի Քրաֆթ-Պոննար*

## ՀԱՅԱՆՊԱՍՏ ՕԳՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԷՋ

*Հայանպաստ օգնութիւններու անդրանիկ ազդակը կը հնչէ սակայն Նոյշաթել քաղաքին մէջ՝ փաստէօր Էտուար Ռոսելի նախաձեռնութեամբ: 4 Մարտ 1896 թուականին Նոյշաթելի մայր տաճարին մէջ ան կը կազմակերպէ* Eglise Independente*-ին պատկանող բողոքական հոգեւորականներու համաժողով մը: Այս համաժողովին մէջ որոշում կ'առնուի փրոֆ. Ժորժ Կոտէի ղեկավարութեամբ անյապաղ ձեւաւորել ազդեցիկ յանձնախումբ մը: Սոյն համաժողովի արձանագրութեան մէջ կը նշուի, թէ «Պրն. Էտուար Ռոսելէն խորապէս ցնցուած է հայկական կոտորածներու մասին* Journal des missions evangeliques de Paris *թերթի հաղորդած տեղեկութիւններէն»: Ան կը հաւատայ, որ Աստուած կը ցանկայ օգնել տարաբախտ հայ ժողովուրդին ոչ թէ մեծ տէրութիւններու, այլ եկեղեցւոյ ծոցին մէջ գտնուող հոգեւոր եղբայրներուն հետ, ազդելու համար Զուիցերիոյ բոլոր եկեղեցիներուն վրայ, որպէսզի ստեղծուի ընհանուր շարժում մը ի նպաստ Արեւելքի մէջ հալածուող քրիստոնեաներուն»:*

*Համաժողովի բոլոր մասնակիցները միանգամայն համաձայն էին այս նպատակին համար ընտրել գործնական ուղի մը. յօդուածներու միջոցով լուսաբանել հանրային կարծիքը եւ համապատասխան յայտարարութիւններով ազդել զուիցերիացիներու խղճին վրայ: Փրոֆ. Կոտէին կ'առաջարկուի պատրաստել եւ հրատարակել հայկական կոտորածներու վերաբերեալ գրքոյկ մը, որով հիմքը կը դրուի հայանպաստ օգնութիւններուն:*

*1896 թուականի Ապրիլին լոյս կը տեսնէ «Հայաստանի տառապանքը» խորագրով գրքոյկը, եւ իսկոյն կը դառնայ հանրութեան ուշադրութեան առարկան* Journal religieux *թերթին մէջ յաջորդաբար հրատարակուող իր յօդուածներով փրոֆ. Կոտէն Զուիցերիոյ մէջ կը դառնայ հայանպաստ օգնութիւններ կազմակերպող պատկառազդու անձնաւորութիւն մը: Արդէն 1 Ապրիլ 1896ին Լօզանի Աւետարանական միութեան կեդրոնական յանձնախումբը հրատապ կոչ մը կ'ուղղէ ի նպաստ տառապեալ հայ ժողովուրդին: Ապրիլ եւ Մայիս ամիսներու ընթացքին բազմաթիւ հոգեւորականներ իրենց եկեղեցիներուն եւ համայնքներուն մէջ այս նպատակին համար դրամահաւաքներ կը կազմակերպեն: Սոյն երեւոյթը շուտով կը տարածուի ամբողջ Զուիցերիոյ մէջ՝ եկեղեցիներու, մամուլի եւ բարեգործ անհատներու կողմէ կազմելով հայանպաստ օգնութիւններու յանձնախումբեր:*

*1896 Յունիս 14-22ին Վանի, ապա Օգոստոս 25-28-ը Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած կոտորածներու կապակցութեամբ, երբ հազարաւոր անմեղ հայորդիներ կը զոհուէին, Զուիրեցիոյ ամբողջ տարածքին կը բարձրանան բողոքի հսկայ ալիքներ: Բազմաթիւ ցոյցեր կը կազմակերպուէին, որոնցմէ ամենամեծը տեղի կ'ունենայ 7 Սեպտեմբեր 1896ին, Լօզանայի համալսարանի ռեկտոր, աստուածաբանութեան փրոֆ. Է. Քոմպի գլխաւորութեամբ:*

Gazette de Lausanne *թերթի տնօրէն եւ անուանի լրագրող Ալպէռ Պոննար իր ճառին մէջ ներկաներէն կը պահանջէ բողոքի հերթական ցոյցեր կազմակերպել Զուիցերիոյ ամբողջ տարածքին: Զուիցերիոյ մէջ ստորագրահաւաքներ կազմակերպելու նպատակով ցուցարարները կ'որոշեն ստեղծել նոր յանձնախումբ մը: Տառապեալ հայ ժողովուրդին հետ զօրակցելու ստորագրահաւաքները պիտի հանդիսանային զուիեցրիացի ժողովուրդի կամքի պերճախօս արտայայտութիւնը, որ համապատասխան խնդրանքով պիտի փոխանցուէր Զուիցերիոյ դաշնակցային կառավարութեան՝ Եւրոպայի մեծ տէրութիւններուն ներկայացնելու նպատակով:*

*Լօզանի մէջ կայացած այս միջոցառումները կ'արժանանան մամուլի մասնաւոր ուշադրութեան, որ խօսքով եւ գործով ջերմօրէն կ'աջակցի այս ստորագրահաւաքը կազմակերպելու ուղղութեամբ: 10 Հոկտեմբերին Լօզանի յանձնախումբը Զուիցերիոյ դաշնակցային կառավարութեան կը ներկայացնէ 113,653 ստորագրութիւններ պարունակող փաստաթուղթ մը: 28 Փետրուար 1897ին Ցիւրիխի յանձնախումբի նախագահ փրոֆ. Գ. Ֆիւրէր՝ Զուիցերիոյ Համադաշնութեան նախագահ տոքթ. Ատոլֆ Տոյխերին կը ներկայացնէ խնդրագիր մը՝ ընդունելու համար հայանպաստ օգնութիւններու կազմակերպութեան ներկայացուցիչներուն: Ընդունելութիւնը կը կայանայ նոյն տարուայ Մարտ 4ին: Պատուիրակութեան խօսանակ փրոֆ. Գ. Ֆիւրէր իր ուղերձին մէջ կը նշէ. «Ներկայացուած 433,080 զուիցերիացիներու ստորագրու-*

*Շար.ը էջ 16*



# ՓԱՍԱՏԻՆԱՅԻ
# ՅՌՉԱԿԱՒՈՐ
# MISSION LIQUOR
## ԽՄԻՉՔԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹԻ
## ԿԵԴՐՈՆԸ

# ՎԵՐՋԱՊԷ՜Ս...
# ԿԼԵՆՏԷՅԼ
# ԿՈՒ ԳԱՅ

***Շատ մօտ, մօտ, մօտ օրէն***
***Ձեր յառաջիկայ տօնական օրերու***
***սեղանները ճոխացած***
***պիտի ըլլան*** MISSION LIQUOR-***ի***
***բացառիկ գիներով եւ խմիչքներով:***

*Մեր գիները անհամեմատելիօրէն*
*աժան են:*
*Եկէ՛ք եւ անձամբ փորձեցէք:*

## ՅՈՒՇԵՐ

# «ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒ. ՔՀՆՑ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆ

### ՓՐՈՖ. ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1944 թուին Մայր Հայրենիքից Իրան ժամանեց Հայրապետական պատուիրակ՝ փրոֆ. Աշոտ Աբրահամեանը: Մայիս 9-ին, գնացի Թեհրան եւ հանդիպեցի փրոֆեսորին: Հետաքրքրուեցի Մայր Հայրենիքի կեանքից, հոգեւոր վիճակից եւ Ս. Էջմիածնից: Նա խորապէս յուզեց ինձ, ուրախառիթ պատասխաններ տալով: Հոգեկան մեծ բաւականութիւն ստացայ, յուսադրիչ լուրեր առնելով Հայրենիքից եւ Ս. Էջմիածնից:

### ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐԱԿԵՐՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Թեհրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ երեցփոխ՝ Մաթէոս Թովմասեանի առաջարկութեամբ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ օծման յաջորդ Կիրակին, Օգոստոս 5ին, պատարագեցի Ս. Աստուածածին եկեղեցում: Արարողութեանը մասնակցում էր քահանայից դասը եւ եկեղեցու քառաձայն երգչախումբը, վաստակաւոր երգահան՝ Համբարձում Գրիգորեանի ղեկավարութեամբ: Քարոզ խօսեցի «Եկեղեցի Հայաստանեայց» բնաբանով: Կէսօրից յետոյ, Ղազուինի Հայոց գործակալական Խորհրդի քարտուղար՝ Ջիւանի Միսակեանի ընկերակցութեամբ, այցելեցինք Տ. Տ. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանին, Հայոց Ակումբի շէնքում: Ժողովուրդը խումբ-խումբ այցելում էր Վեհափառին, համբուրում սրբազան Աջը եւ հայրապետական օրհնութիւն ստանում: Վեհափառը հետաքրքրուեց Ղազուինի հայութեան վիճակից:

### ԹԵՄԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

1945 թուի Օգոստոս8ին, Թեմակալ Առաջնորդ Տ. Վահան Եպս. Կոստանեանը յանձնելով ինձ Թեմի կանոնագրութիւնը, պատուիրեց անմիջապէս գործադրել այն նոյնութեամբ: Օգոստոս 14ին, Ղազուինում հրաւիրեցինք հասարակական ժողով, որտեղ ընթերցեցի Թեմի կանոնագրութիւնը, որի համաձայն այսուհետ ազգային մարմինները պիտի կոչուեն «Գործակալական Խորհուրդ», որին պիտի նախագահի քաղաքի ծխատէր քահանան, իբրեւ հոգեւոր բարձրագոյն իշխանութեան ներկայացուցիչ:

Հասարակական ժողովի արձանագրութիւնը յղուեց Թեմակալ Առաջնորդին, առ ի հաստատութիւն: Սեպտեմբեր 7ի թուակիր նամակով Կոստանեան Սրբազանը վաւերացրեց մեր նոր կազմի ընտրութիւնը:

### ԹԵՀՐԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՕԾՈՒՄԸ

1945 թ. Յուլիս 28ին, Շաբաթ երեկոյ, ներկայութեամբ հոգեւոր դասի, Նորակերտ եկեղեցու նաւակատեաց սրբազան արարողութիւնը կատարուեց: «Լոյս Զուարթ»ը երգեց Տ. Յովհաննէս Հաճեանը, որին անմիջապէս յաջորդեց «Եկեալքս» որն երգեց Տ. Յարութիւն Տ. Մեսրոպեանը: Կիրակի, Յուլիս 29ին, դպրոցի սրահի փոքրիկ սենեակում, Դերենիկ Փոլատեան հայր սուրբի հետ զգեստաւորում էինք երջանկայիշատակ Տ. Ներսէս Արք. Մելիք Թանգեանին: Վերջում Փոլատեան հայր սուրբը հարցրեց թէ որտե՞ղ եմ հոգեւոր կրթութիւն ստացել եւ որտե՞ղ եմ պաշտօնավարում:

Պատասխանեցի հայր սուրբին եւ աւելացրի որ 5-6 տարի եւս դպրապետի պաշտօն եմ կատարել Երեւանի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցում:

«Եկեալքս» յաջող երգեցիք - աւելացրեց հայր սուրբը: Հանդիսաւոր ու պատշաճ շարականներով Սրբազանին առաջնորդեցինք եկեղեցի: Սուրբ Պատարագին նախագահում էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Յովսէփեանը, պատարագում էր Մելիք Թանգեան Սրբազանը, որն օրուայ առթիւ մի պատշաճ քարոզ խօսեց: Ս. Պատարագին ներկայ էին Դամասկոսի Թեմի առաջնորդ Տ. Եփրեմ Եպս. Տոհմունին, Տ. Դերենիկ Վրդ. Փոլադեանը, որն Վեհափառի քարտուղարն էր: Նորակերտ եկեղեցու օծումը կատարեց Երուսաղէմի պատրիարք Տ. Կիւրեղ Արք. Իսրայէլեանը: Բազմահազար ժողովուրդ ներկայ էր եկեղեցական հոգեպարար արարողութեան: Եկեղեցական արարողութիւնից յետոյ Հայոց Ակումբում ճաշկերոյթ տրուեց ի պատիւ հիւրերին:

### «ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ»

Ղազուինի գաւառապետը պաշտօնական մի նամակով ինձ հրաւիրել էր իր մօտ: 1955 թ. Յուլիս 31-ին, դեղագործ Մարգար Յակոբեանի ընկերակցութեամբ գնացինք գաւառապետի մօտ: Նա նախ հետաքրքրուեց ազգային մարմինների ընտրութեան մասին, զարմանք պատճառելով ինձ, ապա ազդարարեց, որ իր նշանակած մարդիկ պիտի ընտրուեն որպէս Գործ Խորհրդի անդամ: Բացատրեցի իրեն, որ մենք որպէս ճանաչուած եւ օրինական փոքրամասնութիւն, ունենք մեր ներքին կանոնագրութիւնը: Իրանի Խորհրդարանում ունենք մեր պատգամաւորները եւ մեր ընտրութիւնները կատարւում են դեմոկրատիկ պայմաններում եւ անընդունելի են գաւառապետի առաջարկները: Գաւառապետը կրկնեց իր խօսքերը եւ սպառնաց լուծարքի ենթարկել որեւէ մարմին, եթէ չի կազմուած իր որոշած մարդկանցից: Ամէն ինչ պարզ էր ինձ համար: Վշտացած դուրս եկայ գաւառապետի մօտից: Օգոստոս 18ին, ազգային սրահում կայացաւ հասարակական ժողով, որտեղ կատարուեց «ընտրութիւն»: Գործ. Խորհրդի կազմի մէջ անցան գաւառապետի նշանակած մարդիկ, խորը դժգոհանք առաջացնելով հասարակութեան մէջ: Նշանակուած այդ մարմինը ունեցաւ ոչ փայլուն գործունէութիւն եւ հազիւ 2 տարուայ կեանք, որից յետոյ ժողովուրդը ազատուեց դրանցից ու կատարեց իրական եւ ազատ ընտրութիւն:

Համնելով այս աշխատութեան աւարտին, կ՛ուզէի սիրելի ընթերցողի ուշադրութեան յանձնել, որ Յուշերիս ընտրութեան եւ նկարագրութեան մէջ, նկատի եմ առել նաեւ նրանց ուսուցանելի լինելու հանգամանքը:

Արդարեւ, կեանքի այն յուշերն են յիշելի եւ արժանի յիշատակութեան, որ որեւէ բան են սովորեցնում (թէկուզ շատ համեստ սահմաններում) ընթերցողին, կամ որեւէ ձեւով հարստացնում են նրան եւ մասնաւորապէս պատանի եւ երիտասարդ ընթերցողի փորձառութիւնը:

Առանց սոյն սկզբունքը նկատի առնելու, այս հրատարակութիւնը շատ աւելի ընդարձակ եւ ծաւալուն կը լինէր:

Ցամենայն դէպս, տար Աստուած, որ այս աշխատութիւնը ծառայած լինի իր նպատակին:

## ԱՐՁԱԳԱՆԳ՝ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻԷՆ

- Սուրբ Յակոբ Մծբնայ հայարպետն իր տօնը

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին հարուստ եղած է ոչ միայն իր շարականներով եւ դէպի Արարիչին ուղղուած աղօթքներով, այլ նաեւ նոյն այդ շարականներն ու աղօթքները յօրինող վանականներով, հոգեւորականներով, որոնց այս մեծ գործին առ ի երախտագիտութիւն, մեր ժողովուրդը զանոնք սուրբերու դասին շարած է, իր դարաւոր պատմութեան ընթացքին:

Անկախ այս բոլորէն, քրիստոնեայ այլ եկեղեցիներու նման, հայ ժողովուրդը իր հաւատքէն մեկնած եւ անոր հանդէպ ունեցած եւ որդեգրած սէրէն եւ յարգանքէն, իր հոգեկան տունն ալ հարստացուցած է բազմազան սուրբերով եւ որոնց համար ուխտի օր նշանակած է: Օրինակները բազմազան են:

Ահաայդ սուրբերէն մէկն է Յակոբ Մծբնայ Հայրապետը, որուն անուան տօնախմբութիւնը այս տարի կը զուգադիպի Դեկտեմբերի 14-ին:

Արդ, Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրեպետի անուան տօնին եւ Լոս Անճելըսի Ս. Յակոբ Եկեղեցւոյ անուանակոչման եւ հիմնադրութեան 67րդ տարեդարձին առթիւ նոյն այս եկեղեցւոյ մէջ՝ 4950 W. Slauson Ave. Los Angeles, CA 90056, Շաբաթ, 13 Դեկտեմբեր, 23008-ին տեղի պիտի ունենայ նախատօնակ՝ երեկոյեան ժամը 7ին:

Ապա յաջորդ օրը, Կիրակի, 14 Դեկտեմբեր, 2008-ին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ որուն աւարտին տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան յատուկ պաշտօն, եկեղեցւոյս բարերար հին ու նոր ննջեցեալներուն հոգիներուն համար:

Նոյն օրը պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեան, առաջնորդ՝ Հայց. Առքլ. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի:

Այս առթիւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու Ծխական խորհուրդը կը հրաւիրէ մեր գաղութի բարեպաշտ զաւակները ու յատկապէս բոլոր Յակոբ անուն կրողները, ներկայ գտնուելու եւ մասնակցելու Ս. եւ Անմահ Պատարագին եւ լսելու առաջնորդ սրբազան հօր պատգամը:

- Կիրակի, 14 Դեկտեմբերին, յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին, եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ աւանդութիւն դարձած Santa Barbara Choiral & Orcestra Socieety- կատարողութեամբ՝ Handel's Messiah երգչախմբային ծրագիրը, ղեկավարութեամբ խմբավար Joanne Gonjian- Wasserman-, որուն գ ընդմիջումներով պիտի ըթերցէ The Christmas Story According to St.Luke-ի բաժինը՝ Գալիֆորնիոյ նախկին նահանգապետ Ճորճ Տէօքմէճեան:

Աւարտին՝ տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն եկեղեցւոյ «Կոկեան» սրահին մէջ:

- Կիրակի, 21 Դեկտեմբեր, 2008-ի յաւարտ Սուրբ Պատարագի տեղի պիտի ունենայ եկեղեցւոյս 67-րդ տարեդարձին նուրիուած աւանդական ճաշկերոյթը, «Կոկեան» սրահին մէջ, մշակութային ճոխ յայտագրով:

Ձեռնարկին, առ ի գնահատանք եւ երախտագիտութիւն Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի ,Hye Sprit Award- ով պիտի պարգեւատրուին եկեղեցւոյս ժրաջան անդամուհիներէն տիկիններ Հելէն Գասպարեան եւ Վիքի Գալայճեան:

Սիրով կր հրաւիրուին մեր բարեպաշտ ժողովուրդը:

Հոգեւոր Հովիւ
եւ Ծխական Խորհուրդ


## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
## Palm Springs

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձ.
(818) 246-0125



Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

## ՅՈՒՇԵՐ

# ԴՐՈՒԱԳՆԵՐ ՍՈՒԷՏԻՈՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*
*(Շարունակուածնախորդ թիւէն)*

*Յեղափոխականների մի քանի տարիների կազմակերպչական գործողութիւնների շնորհիւ եւ Թուրքերի կողմից հայկական բնակավայրերի հետ բախումներից խուսափելու հետեւանքով, Մուսա Լեռը առանց արիւնայեղութեան կանգուն էր մնացել:*

*Այսուհանդերձ, յեղափոխականները դեռեւս չէին դադարեցրել դիմադրութիւնը եւ մի քանի հարիւր խիզախ ու յանդուգն երիտասարդների հետ ապաստանել էին Հաճի-Հապապլի գիւղում, ամրացրել բնական ամուր դիրքերում՝ պատրաստ դիմակայելու թշնամու յարձակման սպառնալիքները:*

*Անգլիական ու ֆրանսական մարտանաւեր էին պարեկութեան յայտնուել Մուսա Լերան ծովափը ու առանց խարիսխ նետելու հանդարտ նաւարկել ետ ու առաջ: Գիշերները, նաւերի լուսարձակները սպիտակ ցոլքերով լերան լանջերին լոյս էին ցոլում, կարծես լուսնեակն էր իջել ցած՝ ապստամբների հոգիներին ազատութեան յոյսի լոյս շաղելու: Այո, ուժի սպառնագին ցուցադրութիւն էր Թուրքերի դէմ, արգիլելու Մուսա Լերան բնակիչների ապստամբական շարժումները արեամբ յեղելու: Օտարների միջամտութիւնը կանխելու նպատակով, Թուրքերը հրաժարուել էին յարձակում նախաձեռնելու: Երեւի եւրոպացիների այդ լռելեայն միջամտութիւնը ետ էր կասեցրել Թրքական զօրքի արշաւը դէպի Մուսա Լեռ:*

*Պաշարուել էր Հաճի-Հապապլին, Թուրք զօրաբանակը օղակել էր այն: Հնչակեանները, իրենց յարած երիտասարդների խմբով թէեւ պատնէշել էին գիւղի մուտքը, սակայն յետագայ մարտերի ընթացքի յաջողութեան հաւանականութիւնը յուսալի չէր, յաղթանակը անհնարին էր եւ այն կարող էր աղէտալի ելքով աւարտուել:*

*Հնչակեան Նահանգային ժողովը նիստ էր գումարել ու Պահլաւին լիազօրել ապստամբութեան ելքը վճռելու, ոչ թէ մահով ու ժողովուրդի աղէտով, այլ արժանապատիւ պայմաններով: Եզրակացրել էին անձնատուր լինելով ռեջ տալ ապստամբութեանը, պահանջելով եւրոպացիների միջամտութիւնը, ժողովուրդի կեանքի երաշխաւորութիւնը եւ իշխանութիւնների կողմից յեղափոխականների արժանավայել ընդունելիութիւնը:*

*Անտիոքի ֆրանսական հիւպատոսի միջնորդութեամբ, Թրքական հրամանատարութեան հետ բանակցութիւններ վարելու համար ներկայացուցիչ էին նշանակել: Զօրքի հրամանատարը խիստ անհանգստացած էր եղել Եւրոպական պետութիւնների մարտանաւերի իրենց ծովափին պարկումից: Բանակցութիւնները յաջող ելք էին ունեցել: Բանակի հրամանատարութեան երկու պատգամաւորներ Հաճի-Հապապլիի պաշտպանական պատնէշների առաջն էին ժամանել: Նահանգային վարչութիւնը նորից նիստ էր գումարել, որին ներկայացրել էին հրամանատարի նամակը, ուր շարադրուած էին եղել անձնատուութեան պայմանները, որոնց գլխաւոր կէտերն էին եղել յեղափոխականների անձերի ապահովութիւնը, կառավարութեան ծախսերով նրանց արտասահման մեկնումը, ժողովուրդի անձին ու ինչքին անձեռնմխելիութիւնը:*

*Զինուած յեղափոխականները պատնէշներին հսկող երիտասարդութեանն էին դիմել՝ բացատրելով այն վիճակը, ուր նրանք գտնւում էին, տեղեկացրել բանակցութիւնների պայմանները եւ նրանց յայտարարել, թէ Մուսա Լերան ժողովուրդի կենաց ու պատուի պահպանումը պահանջում էր իրենցից գերագոյն զոհողութիւն՝ զէնքը վայր դնել ու անձնատուր լինել իշխանութիւններին: Կռուի պատրաստ երիտասարդութիւնը յեղափոխականներին շրջապատած գիւղ էին առաջնորդել: Ժողովուրդը յուզումով էր դիմաւորել նրանց:*

*Յեղափոխականները Թուրք պատգամաւորների առաջնորդութեամբ դէպի բանակատեղի էին ուղեւորուել: Ժողովուրդի երկսեռ ու ամէն հասակի հազար հինգ հարիւր հոգիանոց բազմութիւնը հետեւել էր նրանց: Հակառակ յեղափոխականների խնդրանքներին, ժողովուրդը նրանց ուղեկցել էր նոյնիսկ մինչեւ զինուորական առաջին պահակախմբերը եւ մեծ անձկութեամբ բաժանուել:*

*Յեղափոխականների տասնըչորս հոգիանոց խումբը, իրենց առաջնորդներուն հետ ուղեւորուել էր դէպի Եօղունօլուգ գիւղ, ուր շրջակայ գիւղերի իսլամ թէ քրիստոնեայ հազարաւոր մարդիկ եկել էին դիտելու նրանց երթը: Գիւղի մուտքին, զինուորական պատիւներով, նրանց ընդունել է հրամանատարը, ուր նրանց ձեռքով բարեւելու ժամանակ զինուորները նաեւ բարեւի պատուի էին կանգնել: Յեղափոխականները ցանկացել էին զէնքերը յանձնել, սակայն հրամանատարը մերժել էր այդ արարողութիւնը կատարել ժողովուրդի առաջ: Կարգադրել էր զէնքերը յանձնել իր բնակարանի կողքի սենեակում:*

*Հրամատարը թոյլատրել էր յեղափոխականներին տեսակցելու հայերի ներկայացուցիչների հետ: Նրանք երկու հարիւր զինուորների ուղեկցութեամբ գնացել էին Անտիոք: Նրաց զինուորական պատիւներով առաջնորդել էին պալատի կառավարչատուն եւ յատուկ ընդունելութեան արժանացրել: Տասնըեօթ օր այնտեղ մնալուց յետոյ, նրանց Հալէպ էին փոխադրել: Թուրքերի նենգ սովորութեան համաձայն, իշխանութիւնները իրենց ստանձնած պարտաւորութիւնները չեղեալ էին համարել եւ յեղափոխականները նկատուել էին որպէս բանտարկեալներ ու դատաստանի յանձնուել:*

*Թրքական հրամանտարութեան հետ կնքուած համաձայնագիրը ֆրանսական հիւպատոսի կողմից ուղարկուել էր Պոլսոյ ֆրանսական դեսպանատուն, որի միջնորդութեամբ յեղափոխականները ազատ էին արձակուել եւ հեռացել երկրից:*

*Հնչակեանների, 1890-ական թուականների Մուսա Լերան գործունէութեան պատմութիւնը երեւի չատ սակաւ է ուսումնասիրուել: Հնչակեան շրջանային վարչութեան եւ նրան գլխաւորած գործիչների կազմակերպչական աշխատանքների շնորհիւ, Մուսա Լերում կանխուել էր Թրքական զօրքերի ներխուժումը եւ հնարաւոր արիւնայեղութիւնը: Իշխանութիւնների դէմ ընդվզման շարժումը եւ նրա յաջող ընթացքը ազատութեան լոյսի ջահեր էին վառել լեռնականների սրտերում: Մէկ տասնամեակ յետոյ, այդ ջահերի բոցերը ազատութեան նոր մարտեր էին բոցավառելու իրենց լեռների բարձունքներին, թշնամին գալու էր հազատ, հազար զօրքով, թնդանօթներով... եւ հինգ ճակատամարտերում պարտուել էր թշնամին, յաղթել էր հողի պաշտամունքի ու ազատութեան հայու ոգին:*

***********

*Օգտագործուած գրականութիւն:*

*«Դրուագներ Սուէտիոյ Յեղափոխութեան Պատմութենէն»: Մուսա Լերան Քէպուսիէ գիւղից Հնչակեան ականաւոր գործիչ՝ դէպքերի կազմակերպիչ-ղեկավար Ե. Կարիկեանի 1921 թ. Փարիզ հրատարակուած աշխատութիւնը, որտեղ պատմաբանի անաչառութեամբ շարադրուած է Մուսա Լերան (Սուէտիայի) առաջին ապստամբութեան պատմութիւնը:*

# ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*թիւնները քրիստոնեայ հայ ժողովուրդին դէմ կատարուած սոսկալի վայրագութիւններուն առնչութեամբ խորունկ ցաւի եւ բողոքի զօրեղ արտայայտութիւն են: Մենք ազգային ատելութիւն եւ ազգային թշնամիներ չենք ճանչնար, ուստի լիայոյս ենք, որ երբ մեր ժողովուրդին խիղճը կ'արտայայտուի հարիւր հազարաւոր ձայներու միջոցով, ոչ ոք կրնայ մեզի շահադիտական նպատակներ վերագրել: Մեր ժողովուրդը կ'առաջնորդուի դէպի այս մեծ հանրաքուէն սրբազան բարկութեամբ եւ ողորմածութեան զգացումներով: Սոյնը պէտք է ազդեցութիւն ունենայ նաեւ Եւրոպայի այլ ժողովուրդներու վրայ»:*

*Այսպէս, սոյն ստորագրահաւաքները հիմնականօրէն Լօզանի, նաեւ Զուիցերիոյ այլ քաղաքներուն մէջ գերազանցապէս կը հետապնդէին հետեւեալ նպատակը. շեշտել ժողովուրդի կամքի արտայայտութիւնը կառավարութեան հանդէպ, որպէսզի վերջինս կարելիութիւնը ունենայ համապատասխան խնդրանքով մը հանդէս գալ Եւրոպական մեծ տէրութիւններուն մօտ՝ զօրավիգ կանգնելու համար քրիստոնեայ հայ ժողովուրդին:*

*Սա աննախադէպ երեւոյթ էր: Շուրջ կէս միլիոն ստորագրութիւն հաւաքուած է զօրակցելու համար Սուլթանի ճիրաններուն մէջ արիւնաքամ դարձող հայ ժողովուրդի զաւակներուն: Զուիցերիացի բիւրաւոր քաղաքացիներ՝ Ժընեւ, Լօզան, Նոշաթել, Ցիւրիխ եւ այլ քաղաքներու մէջ, բողոքի ցոյցերով եւ ստորագրահաւաքներով հանդէս եկած են արտայայտելու համար զուիցերիացի բարեսէր եւ բարեգործ ժողովուրդին հաւաքական կամըքը:*

*Սակայն այլ բան է սրտի ցանկութիւնն ու ապրումը, դժբախտաբար այլ դիւանագիտութիւնը. Զուիցերիոյ չէզոքութիւնը չխախտելու մտավախութեամբ, կառավարութիւնը կը խուսափի գործնական ընթացք տալու այս ստորագրահաւաքներուն, եւ ընհակառակը՝ ան չի զլանար 31 Օգոստոս 1900-ին շնորհաւորական հեռագիր ուղարկելու սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ին գահակալութեան 25-ամեակին առթիւ:*

*Բայց վերոյիշեալ ստորագրահաւաքներն ու հանրաքուէները ապարդիւն չեն մնար, այլ ուղղակի կը սատարեն արթնցնելու համար զուիցերիացի ժողովուրդի մասնաւոր ուշադրութիւնը հայ ժողովուրդի դառն ճակատագրի նկատմամբ, որ իր զօրեղ արտայայտութիւնը կը գտնէ մարդասիրական օգնութիւններու իրագործումով: Հաւաքուած հսկայական նուիրատուութիւնները զուիցերիացի հայասէրներուն հնարաւորութիւն կու տան Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ հիմնելու օգնութեան կեդրոններ՝ Սվազի, Պարտիզակի, Ուրֆայի մէջ եւ այլուր կազմակերպելով որբանոցներ, հիւանդանոցներ, խնամատարութեան կայաններ:*

*Աւելորդ պիտի չըլլար զուիցերիացի մեծ հայասէրներու շարքին այստեղ յիշատակել հետեւեալ երախտաւորներու անունները. Լէոփոլտ Ֆաւր, Քառլ Շէնքլ, Ժորժ Կոտէ, Վիլհելմ Վիշեր-Իզելին, Եագոբ Քինցլէր, Էլիզապէթ Քինցլէր, Քառլ Մեյէր, Մաքս Միւլլէր, Աննա Շուայցէր, Եոհաննէս Շփէօռի, Քաթարինա Շդուքի, Էրի Վիշեր, Գերթուտ Վիշեր, Թէոտոր Վիզէր եւ յատկապէս մեծանուն փասթէօր, Պենեանի եւ Ժընեւի հայ որբանոցներուն վաստակաշատ տնօրէն՝ Անթոնի Քրաֆթ-Պոննար(1):*

*(Շարունակելի 1)*

***********

*1 Զուիցերիացի փասթէօր Անթոնի Քրաֆտ Պոննարը (1869-1945) եղած է Ժնեւանի եւ Ժընեւի հայ որբանոցներու նուիրեալ եւ անձնազոհ տնօրէնը: Հայաստանին եւ հայ ժողովուրդին նուիրուած բազմաթիւ յօդուածներէ բացի ան հեղինակ է նաեւ հետեւեալ մենագրութիւններուն.* Antony KRAFFT-BONNARD, Sans foyers. Le cri de detresse de l'Armenie5 Geneve, 1921, Pour le droit de l'Armenie5 Alencon5 1922, L'Heure de l'Armenie, Geneve, 1922, L'Armenie a la conference de Lausanne5 , Alencon, 1923, L'Exil armenien, Geneve,5 19265 Armenie, justice et reperation, Geneve, 1930.


**ԲԱՑՈՒԱԾ Է**

**Հիպնոսաբուժութեան կեդրոն ղեկավարութեամբ՝**
**Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝**
**առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00**
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ**

# ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼՈՍԱՆՃԵԼԸՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 1-էն*

փոխ-վարչապետ Վահան Շիրխանեանը: Արդարեւ, հայրենի ականաւոր անձնաւորութիւնը տասնօրեայ այցելութեամբ քաղաքս կը գտնուէր որպէս գլխաւոր բանախօս Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 121րդ տարեդարձի հանդիսութեանց:

Վահան Շիրխանեան նախ շնորհակալութիւն յայտնեց լոսանճելոսահայ մամուլի եւ հայկական հեռուստաժամերու ներկայացուցիչներուն ու ապա համառօտ ակնարկ մը նետեց Հայաստանի այժմու քաղաքական հորիզոնին: Ան ըսաւ թէ առաջին խնդիրն է վերականգնել Հայաստանի սահմանադրական կարգ, զայն դարձնել օրէնքի երկիր, ժողովրդավարական եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան երկիր: Յաջորդը արցախեան խնդիրն է: Մենք բոլորս ունինք միասնական առաջադրանք մը՝ ապահովել արցախեան խնդրի հայանպաստ լուծումը: Այս խնդիրներու շուրջ՝ ունինք ձեզի հետ շատ ընելիքներ:

Այնուհետեւ տեղի ունեցան բազմաթիւ հարցադրումներ: Ստորեւ կու տանք Վ. Շիրխանեանի տուած պատասխաններուն համառօտագրութիւնը:

. Հայաստանն ու Արցախը ներկայիս կը դիմագրաւեն բազմաթիւ մարտահրաւէրներ, բոլորն ալ վտանգաւոր են:

. Քոչարեանական 10 տարիները ընդհանրապէս ես անուանել եմ հայասպանութեան 10 տարիներ:

. Դիւանագիտութիւնը չէր կարող աշխատիլ այնպէս ինչպէս կը պահանջէին Արցախի շահերը: Այդ դիւանագիտութիւնը կ'աշխատէր այնպէս ինչպէս պէտք էր Քոչարեանին...: Ան Ղարաբաղը դուրս բերաւ բանակցային գործընթացէն: Բան մը որ Լեւոն Տէր Պետրոսեանի ժամանակ կը պահպանուէր:

. Հայաստանի հասարակութիւնը պէտք է Սերժ Սարգսեանէն պահանջէ հրաժարիլ բանակցային գործընթացէն:

. Թուրքիոյ եւ Ատրպէյճանի համար մեծագոյն պարգեւն էր որ Ղարաբաղը հանել բանակցային գործընթացէն:

. Մենք պէտք է այստեղ թէ՛ ամերիկեան գոնկրէսի եւ թէ՛ պետդեբարթմենթի առջեւ ցոյցեր ընենք, նմանապէս Մոսկուայի եւ Փարիզի մէջ ներկայացնենք պահանջներ: Այս մէկը չընելը անթոյլատրելի է:

. Հայաստանէն արտագաղթած է 800,000 մարդ, որոնք աշխատունակ են: Հայաստանի մէջ ստեղծուած է «տէֆորմացուած» (ձեւազեղծուած) հասարակութիւն:

. Բացականերուն տեղը կը քուէարկէ իշխանութիւնը: Իսկ քուէարկող ակտիւ զանգուածը՝ բացակայ է...:

. Երիտասարդ ուսանողները դուրս կու գան արտասահման: Եթէ տարիներ չարունակ չունենաս բնական աճ կը վերածուիս մահացող ազգի:



Տեսարան մը մամլոյ ասուլիսէն

. Քոչարեանը այնպիսի վնասներ հասցուցած է, որոնց բուժումը տարիներու կը կարօտի: Ոմանք անբուժելի են...:

. Երիտասարդ գիտնականները տեղաւորուած են Եւրոպայի ու արտասահմանի մէջ եւ կը գնահատուին:

. Ատրպէյճանի մէջ բնակչութեան տարեկան աճը 8.1 տոկոս է իսկ Հայաստանը՝ 0:

. Հայաստանի բանակն ունի 24,000 զինուոր իսկ Ատրպէյճանը՝ 90,000:

. Հանրահաւաքներու կասեցումը նպաստակադրեց հնարաւորութիւն տալ արցախեան հարցի բարւօք լուծման: Սերժ Սարգսեան շարունակեց Քոչարեանի ուղին:

. Թուրքիոյ սահմանը պէտք է փակ մնայ, սահմանը բանալ կը նշանակէ մենք Հայաստանը կը յանձնենք Թուրքիոյ: Այս վերջինի շահը ոչ թէ տնտեսական է, այլ քաղաքական-ազգային է:

. Ցեղասպանութեան խնդիրը կը ճնշէ Թուրքիոյ վրայ յատկապէս Եւրոմիութենէն ներս:

. Մենք ժամանակին ընտրած ենք Ռուսաստանը որպէս բարեկամ երկիր: Բայց Քոչարեանի սխալն այն էր որ այլ տեղեր աչք կը նետէր...: Ներկայիս Հայաստան դաշինք ունի Ռուսաստանի հետ եւ բազմաթիւ այլ պայմանագրեր: Եթէ մենք միասնական չենք՝ չենք կրնար ոչ մէկ յոյս կապել այլ երկիրներու վրայ:

. Հեռանկար կայ բանակը, ոստիկանութիւնն ու ժողովուրդը ըլլայ միասնական: Այս բոլորը կապուած է իշխանափոխութեան հետ:

. Պէտք է ըլլար Հայաստան-Սփիւռք Խորհուրդ (փոխան սփիւռքի նախարարութեան, Գ.Մ.), որուն մէջ պէտք էր ըլլային թէ Հայաստանի նախագահը, թէ վարչապետը եւ թէ սփիւռքի ականաւոր գործիչները: Ըլլալու էին նաեւ գործադիր մարմին մը եւ այդ խորհուրդի որոշումներն ըլլային բոլոր նախարարութիւններուն համար: Այս պարագային կը կարծեմ որ սփիւռքի համախմբումը, ակտիւացումը եւ մասնակցութիւնը Հայաստանի խնդիրներու իրականացման մարզին մէջ կ'ըլլար շատ աւելի գործնական:

. Թէ Քոչարեանը եւ թէ Սերժ Սարգսեանը Ջաւախքի հարցին անդրադառնալով ըսած են՝ «Մենք Ջաւախքի խնդիր չունենք»...:

. Հայաստանը իր ներկայ ճգնաժամէն դուրս գալու համար լաւագոյն ձեւը քաղաքական պայքարն է: Համընդհանուր միասնութեան շնորհիւ է որ կարելի կը դառնայ իշխանափոխութիւնը:

Մամլոյ ասուլիսը եզրափակելով Յ. Տէր Դաւիթեան յարեց «Պէտք է ացնինք լոզունգային հայրենասիրութենէն դէպի գործնական հայրենասիրութեան աշխատանքին»:

Գ. Մ.

# ՅԱՒԵՐԺԱՑՄԱՆ ԱՂԷՏԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

*Շարունակուած էջ 1-էն*

թեամբ երկրակործան երկրաշարժի թիրախ դարձան:

Հայրենիքը պատուհասող այս տարբերքը, ակնթարթի մը մէջ աղէտի գօտիի վերածեց Հայաստան աշխարհի տարածութեան քառասուն առ հարիւրը: Մեծապէս վնասուեցան քանըմէկ մեծ ու փոքր քաղաքներ: Նոյն ճակատագրին ենթակայ դարձան աւելի քան երեք հարիւր քառասուն գիւղեր: Տնազուրկ, անօթեւան, անպատսպար, փողոցները ինկան հինգ հարիւր տասնըչորս հազար քաղաքացիներ:

Զոհ գացին շուրջ քսանըհինգ հազար հայորդիներ...

Այս աղէտէն անմասն չի մնացին մեր մշակութային կոթողները:

Խորտակուեցան հարիւր յիսուն հինգ յուշարձաններ եւ հինգ եկեղեցիներ: Մեծ վնասներու ենթարկուեցան մեր ճարտարապետական կոթողները:

Ի տես այս կործանարար երկրաշարժին պատճառած ողբերգական այլ ցնցիչ իրողութեան, մարդասիրական օգնութեան ձեռքեր չուշացան երկարելու՝ աղէտահար Հայաստանին՝ օգնելու համար աղէտեալներուն: Բազմաթիւ երկիրներ, հանգանակային, ազատարարական, պատսպարական, բժշկական, շինարարական ու նիւթական հսկայական օժանդակութիւններ մատուցին աղէտի գօտիներուն: Նաեւ ներշնչեցին վստահութիւն, այն առումով, թէ շուտով աղէտի գօտիներու վերականգնումը իր աւարտին կը հասնի:

Հակառակ կատարուած հսկայական ներդրումներուն, ձեռնարկուած շինարարական աշխատանքներուն եւ տրուած հաւաստիքներուն՝ ձեռք ձգուած արդիւնքները ապահովութիւն չէին ներշնչեր այցելուներուն:

Այսպէս, երկրաշարժէն դեռեւս տասնըվեց տարիներ ետք, Հայաստանի հանրապետութեան քաղաքական գործիչներէն ընդդիմադիր պարագլուխներէն Ստեփան Տէմիրճեան, երկրաշարժի աղէտի քաղաքներէն Սպիտակ, Վանաձոր եւ Գիւմրի՝ իրեն աւանդութիւն դարձուցած տարեկան այցելութիւնէ վերադարձին, այսպէս պիտի գնահատէր այդ գօտիներէն ներս ցարդ կատարուած աշխատանքը- «Ուղղակի անյարմար է, բոլոր ծրագրերը ձախողուել են աղէտի գօտու վերականգնման: Եւ շինարարական աշխատանքներն էլ շատ դէպքերում, դա էլ ենք տեսնում, շահարկում են, օգտագործում են քաղաքական նպատակների համար: Պարզապէս ամօթ է երբ խօսում ենք ցինիկաբար, զարգացման գօտու մասին: Զարգացման նշոյլ անգամ չկայ:

Այսօր, երբ երկրաշարժէն քսան տարիներ ետք, տակաւին կը խօսինք աղէտի գօտիներու մասին, թէ անոնք տակաւին գտած չեն իրենց կեանքի բնական ճանապարհը,

Ցաւով կը նշենք, թէ բազմահազար մարդ կը մնան տնազուրկ Սպիտակի մէջ,

Կան տակաւին վերապրողներու կոտտացող վէրքեր:

Չկայ արդիւնաբերական նախաձեռնութեան ոչ մէկ նշոյլ:

Չկայ ոչ մէկ դրական գործընթաց: Կը շեշտուի միայն քաղաքի վերականգնումին սատար հանդիսանալու կոչուած, նիւթական օժանդակութեան հրամայականը...

Թէ՝ յուսահատութիւնը ընդհանրական երեւոյթ է աղէտեալ գօտիներէ ներս.

Այս կը նշանակէ, թէ իշխանութիւնները գիտակցաբար անտեսած են եւ տակաւին կ'անտեսեն աղէտի գօտիներու քանամեայ ողբերքութիւնը:

Այս կը նշանակէ, թէ աղէտի գօտիներու յատկացուած գումարները ծառայած են ներքաղաքական նպատակներու:

Ծառայած են հատուածական շիլ շողայլանքներու:

Այս կը նշանակէ, թէ մեր աղէտի գօտիները պիտի մնան աղէտեալ գօտիներ, այնքան ժամանակ, որ մեր երկրէն ներս անգոյ է հաշուետու իշխանութիւն եւ հաշուեառ ժողովրդավարութիւն: Այս արդէն ուրիշ պատմութիւն է:

Աղետահար Սպիտակի, Վանաձորի, Շիրակի, Դիլիջանի եւ Գիւմրի եւ այլ քաղաքներու աւերակման քսաներորդ տարելիցի տխուր առիթով, կը խոնարհինք մեր բազմահազար զոհերու անթառամ յիշատակին առջեւ, այն անխառն ակնկալութեամբ, որ աղէտի գօտիներու ամէն հետք կ'անհետանայ եւ նոր ու լուսաշող առաւօտ մը կը բացուի մեր զալիք նոր սերունդներու առջեւ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**

## ՄԱՐԶԱԿԱՆ

## «ՄԵՐ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ ՑԱՒՈՒՄ ԷԻՆ ՄԻՄԵԱՆՑ ՀԱՄԱՐ»



*«Երբ տղաներից որեւէ մէկը աւարտում էր իր պարտիան, ապա չէր հեռանում, մնում, սպասում էր, ցաւում էր իր միւս խաղընկերոջ համար: Մի շարք այլ հաւաքականներում նման բան չկար: Ով աւարտում էր պարտիան, հեռանում էր: Թիմային ոգին մեր հաւաքա-կանում շատ բարձր էր», - այսօր «Տեսակէտ» ակումբում կայացած մամուլի ասուլիսում ասաց շախմատի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Արշակ Պետրոսեանը:*

*Նա ընդգծեց, որ Հայաստանը օլիմպիադայում ընդամէնը 9-րդն էր իր վարկանիշով, սակայն զարմացրեց շատերին՝ դառնալով ախոյեան. «Մեզանից բարձր վարկանիշ ունէին մի շարք հաւաքականներ: Ռուսաստանը միանգամից 100 վարկանիշային միաւորով առաջ էր մեզանից: Սա հսկայական տարբերութիւն է: Բարձր վարկանիշ ունէին նաեւ Ուկրանիան, Չինաստանը, Ատրպէյճանը, Ֆրանսան, Պուլկարիան, Հնդկաստանը: Շատ մեծ յաջողութիւն է 2 անգամ օլիմպիադայում յաղթելը: Նման բան յաջողուել է միայն Ռուսաստանի եւ ԽՍՀՄ հաւաքականներին»:*

*Ասուլիսին ներկայ էին նաեւ միւս գրոսմայստերները: Լեւոն Արոնեանը մասնաւորապէս նշեց, որ յաղթանակում մեծ լումա ունի թիմի գլխաւոր մարզիչը՝ Արշակ Պետրոսեանը.*

*«Նախկինում էլ մենք լաւ թիմ ունէինք, պայքարում էինք բարձր տեղերի համար, բայց ինչ-որ բան չէր հերիքում ախոյեանութեան համար: Երբ թիմ վերադարձաւ Արշակ Բագրատիչը (Պետրոսեանը-խմբ.) սկսեցինք աւելի վստահ, յաղթանակներ տօնել: Նա նոր լիցքը հաղորդեց հաւաքականին»:*

*Հայաստանի հաւաքականի կազմում ամենաարդիւնաւէտ խաղ ցուցադրած Գաբրիէլ Սարգսեանն էլ նշեց, հաւաքականի անդամները ոչ մի դէպքում չեն հեռանայ Հայաստանի հաւաքականից. «Դեռ աւելին, առաջիկայում արտասահմանում հանդէս եկող հայ տաղանդաւոր շախմատիստներն են գալու եւ հանդէս գալու Հայաստանի դրօշի ներքոյ»:*

*Օլիմպիադայում Հայաստանի կազմում միակ նորեկը Տիգրան Պետրոսեանն է, որը փոխարինել էր լուսահոգի Կարէն Ասրեանին: Պետրոսեանը ասաց, որ այս հանգամանքը պարտաւորեցնող էր. «Կրկնակի պատասխանատուութեամբ էի հանդէս գալիս: Տղաները արդէն օլիմպիադայում հանդէս գալու փորձ ունէին, սակայն ես առաջին անգամ էի մասնակցում: Նրանց եւ մարզչի աջակցութեամբ արագ մերուեցի: Մեկնարկային պարտիաները յաջող ստացուեցին եւ այդպէս շարունակուեց: Պարտաւորեցնում է նաեւ այն հանգամանքը, որ կրում եմ աշխարհի նախկին ախոյեան Տիգրան Պետրոսեանի անուն ազգանունը»:*

*Տղաների յաջող ելոյթները ստուերում են թողել Հայաստանի կանանց հաւաքականին, որ եւս յաջող հանդէս եկաւ օլիմպիադայում: Մեր շախմատիստուհիները գրաւեցին 6-րդ հորիզոնականը: Արշակ Պետրոսեանի կարծիքով սա շատ բարձր արդիւնք է. «Մեր աղջիկներից եւս գոհ եմ: Նրանք վերջին տարիներին շատ կայուն են հանդէս գալիս եւ այս անգամ էլ բաւական բարձր հորիզոնականում յայտնուեցին: 100-ից աւել մասնակիցների շարքում 6-րդ տեղը դա շատ լաւ արդիւնք է»:*

## ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է ՉԻՆԱՍՏԱՆԻ ՍՈՒՊԵՐՄՐՑԱՇԱՐԻՆ



*Դրեզդենում աւարտուած օլիմպիադայից յետոյ գրոսմայստեր Լեւոն Արոնեանը այս օրերին փորձում է հանգստանալ: Ընդամէնը մէկ շաբաթ անց Լեւոնը մեկնելու է Չինաստան, որտեղ մասնակցելու է նոր սուպեր-մրցաշարի: Հայ շախմատիստը գտնում է, որ ներկայումս լաւ մարզավիճակում է:*

*«Դրեզդենի օլիմպիադայում աւելի լաւ հանդէս եկայ, քանի 2 տարի առաջ Թուրինում: Աւելի հաւաքուած եւ վստահ էի հանդէս գալիս: Ընդհանուր առմամբ բոլոր պարտիաներում էլ լաւ դիրքերում էի: Պարտուեցի միայն Գելֆանդին, սակայն այս պարտիայում եւս լաւ դիրքում է, պարզապէս յետագայում իրավիճակը խճճուեց»,-«Ա1+»-ի հետ զրոյցում ասաց Լեւոն Արոնեանը:*

*Պարտուելով այս պարտիայում՝ Լեւոնը ռիսկի է դիմել Սերբիայի հետ մրցավէճում, որտեղ նրա մրցակիցը Իվան Իվանիսեւիչն էր. «Քանի որ պարտուել էի Գելֆանդին ցանկանում էի անպայման յաղթել, մի փոքր գայրացած էի: Ընդհանրապէս շախմատում թիմային պայքարում հանդէս գալը աւելի բարդ է: Անհատականում աւելի հանգիստ ես հանդէս գալիս, իսկ թիմում արդէն պատասխանատուութիւնը աւելի է մեծանում, լարուածութիւն կայ»:*

*Առջեւում Չինաստանում կայանալիք մրցաշարն է, որը մեկնարկում է Դեկտեմբերի 10-ին: Արոնեանի մրցակիցները կը լինեն 5 յայտնի գրոսմայստերներ:*

*Իսկ Յունուարին հայ շախմատիստը հանդէս կը գայ Վէյկ ան Զեեւի աւանդական սուպերմրցաշարում:*

## ԵՐԿՈՒ ՄԵՏԱԼ ՏԱՐԲԵՐ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐՈՒՄ




*Հայաստանի ըմբշամարտի հաւաքականը ընդամէնը 1 պրոնզէ մետալ է նուաճել Ֆրանսական Նիցա քաղաքում կայացած միջազգային մրցաշարում: Անրի Դելանի աւանդական յուշամրցաշարում հանդէս են եկել առաջատար երկրների ներկայացուցիչները:*

*Հայաստանի ներկայացուցիչներից յաջողութեան է հասել միայն յունա-հռոմէական ոճի ըմբիշ Միհրան Յարութիւնեանը: Միհրանը 66 կգ քաշայինների պայքարում նուաճել է պրոնզէ մետալ: Այս քաշային կարգում յաղթող է դարձել Սեյրան Սիմոնեանը, որ սակայն հանդէս է գալիս Ռուսաստանի դրօշի ներքոյ: Եզրափակիչում Սեյրանը առաւելութեան է հասել Ղազախստանի ներկայացուցիչ Դարխան Բայխմեեւի նկատմամբ:*

*Թիմային հաշուարկում ամենայաջողը հանդէս են եկել ԱՄՆ-ի ներկայացուցիչները: Միացեալ Նահանգների հաւաքականին յաջորդել են Ֆրանսան եւ Ռուսաստանը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒԺԵՂԱԳՈՅՆՆԵՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

*Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան (ՖԻԼԱ) պաշտօնական հրաւէր է ուղարկել յունահռոմէական ըմբշամարտի աշխարհի 8 լաւագոյն թիմերին, որոնք 2009թ. տարուայ Փետրուարի 20-21-ին պէտք է վիճարկեն աշխարհի գաւաթը: Հրաւիրուածների թւում է նաեւ Հայաստանը, որ առաջին անգամ է նման իրաւունքի արժանանում: Մեր ընտրանու մրցակիցները լինելու են Ռուսաստանը, Ֆրանսան, Չինաստանը, Քուպան, Ղազախստանը, Հունգարիան եւ Ատրպէյճանը:*

*2008թ. ընթացքում Հայաստանի յունա-հռոմէական ոճի հաւաքականը 2 պրոնզէ մետալ է նուաճել օլիմպիական խաղերում, 1-ական ոսկէ եւ արծաթէ մետալներ Եվրոպայի առաջնութիւնում:*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Վարդան եւ Վարդուհի Լեռանեաններ Նիւ Ճըրզիէն կը շնորհաւորեն Ս.Դ.Հ.Կ.ի 121 ամեակը ու կը մաղթեն նորանոր յաջողութիւններ ազգային ու հայրենասիրական աշխատանքներուն:*

*Այս առթիւ $200 կը նուիրեն «Մասիս»ին:*


**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**

**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**

**GLOABCAST SATELLITE**

**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**ՔԱՋ ՆԱԶԱՐ**

**ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**

**ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէյլի 280-րդ կայանից**

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

**Մեծ ժողովրդականութիւն Վայելող Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի Եւ Մեքսիքոյի Ամբողջ Տարածքին**

**Դուք Կրնաք Դիտել**

Հայաստանեան Լուրեր – Քաղաքական Վերլուծութիւններ

Երաժշտական Հաղորդումներ – Եւայլն

**Մանրամասնութիւններու Համար**

**Հեռաձայնել 818.547.9696**

# ՄԱՀ ԱՐՄԷՆ ՏԱՏՈՒՐԻ

*Սփիւռքահայ գրականութիւնը կորսնցուց տարեց սերունդի ներկայացուցիչներէն գրող Արմէն Տատուրը, որ իր մահկանացուն կնքեց Նոյեմբեր 29ին, Լոս Անճելըսի իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ եւ անողոք հիւանդութեան:*

*Արմէն Տատուր ծնած է 1920ին, Կիլիկիոյ Սելեւկիա քաղաքը: Այնուհետեւ Եգիպտոս փոխադրուելով հոն ստացած է իր բարձրագոյն ուսումը: Շատ կանուխ տարիքին սկսած է գրել եւ աշխատակցիլ հայ մամուլին:*

*Իր հրատարակած գործերէն են «Կը սիրեմ Աշխարհը», «Գեղջկական Պատկերներ», «Անկրկնելի Ապրումներ», «Համանուագ» (երկու հատոր) եւ այլ պատմուածքներ: Հանգուցեալը ներհուն աշխատակիցներէն էր «Մասիս»ի եւ տեղական հայ մամուլին:*

*Արմէն Տատուրի յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի Դեկտեմբերի 2ին, Վէն Նայսի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ:*

*«Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Տոքթ. Արշակ Գազանճեան իր դամբանականին մէջ վեր առաւ նորոգ հանգուցեալի արժանիքները թէ որպէս գեղարուեստական գրականութիւն մշակող անձ, թէ հրապարակագիր եւ թէ մեր ազգային աւանդութիւններուն կառչած իսկական հայ մտաւորական:*

*Խօսք առին նաեւ Աւետիք Գուլաք ( Պոլսահայ Միութիւն), Աբօ Ճապարեան («Հայ Կեանք» շաբաթաթերթ) եւ ուրիշներ, որոնք բարձր գնահատեցին Արմէն Տատուրի գրական եւ մարդկային արժանիքները:*

*«Մասիս» խորապէս կը ցաւակցի իր ներհուն աշխատակիցին մահը եւ վշտակցութիւն կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ բոլոր հարազատներուն:*

# ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 20ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

*Շարունակուած էջ 5-էն*

*կան փտածութիւնը, այսինքն անհրաժեշտ երկաթի, պեթոնի եւ այլ երկրաչափական հսկողութեան բացակայութեան, կառուցուած շէնքերը խաւաքարտէ թոյլ կառոյցներով փուլ եկան, եւ խլեցին այդքան շատ մարդկային զոհեր:*

### «ԱՂԷՏԻ ԳՕՏԻ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ

*Այս հասկացողութիւնը, դժբախտաբար, տակաւին կը մնայ ի զօրու ոչ միայն Դեկտեմբեր 7, 1988ի երկրաշարժին վերաբերեալ, այլ միւս երկուքին պարագային ալ հաւասարաբար: Թէ ցեղասպանութեան եւ թէ ղարաբաղեան հարցի շուրջ, հայ ժողովուրդը կը շարունակէ մնալ «աղետի գօտի» հասկացողութեան մէջ: Պիտի առարկուի թէ, նոյնինքն 20րդ դարու ընթացքին, արդեօ՞ք հայ ժողովուրդը չունեցաւ ինքնագովութեան կամ գոհունակութեան պահեր: Կասկած չունինք թէ ունեցաւ: Ցեղասպանութեան անմիջապէս յաջորդող շրջանին, Մայիս 28, 1918, հայ ժողովուրդը ունեցաւ իր անկախութեան կարճատեւ շրջանը, զոր տակաւին հպարտութեամբ կը նշենք, Ղարաբաղեան ազատագրական պայքարը, մեր ժողովուրդի հազարամեայ պատմութեան ընթացքին, յաջողած կրնանք նկատել, հակառակ այն իրողութեան որ ղարաբաղեան հարցը տակաւին չէ գտած իր վերջնական, քաղաքական լուծումը, եւ մանաւանդ այս օրերուն, նոյնիսկ վտանգ կը սպառնայ ձերքբերուած յաղթանակի:*

*Ի՞նչ կը վերաբերի երկրաշարժին, աղետէն տակաւին 20 տարիներ ետք, անոր թողած աւերը կը պահէ իր այժմէականութիւնը: Երկրի պատասխանատու իշխանութիւնները, թէ համայնավար կարգերու տակ, եւ թէ անկախութեան շրջանին, չկարողացան հայութեան գիտակցութենէն ջնջել «աղետի գօտի» հասկացողութիւնը: Երկրաշարժի անմիջական վաղորդայնին, այդ օրերու Խորհրդային կարգերու վարչապետ Նիքոլա Ռիժքովի նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ աշխարհի շատ մը երկիրներու եւ հայ սփիւռքի օգնութեան միջոցաւ, կարելի նպաստը ընծայուեցաւ աղետեալներուն, կեանքեր փրկելու, բժշկական օգնութիւն հասցնելու, փլատակները մաքրելու, մէկ խօսքով մարդասիրական միջոցառումներու ձեռնարկելու: Ի հարկէ, նոյնինքն այս գործին մէջ, անպակաս մնացին անկանոնութեանց, անպարկեշտութեան, չարաշահութեան կարեւոր դէպքեր: Հարց է թէ մինչեւ այսօր, ինչո՞ւ պետութիւնը տակաւին ունի, իշխանութեանց խոստովանութեամբ իսկ, շուրջ 7000 ընտանիքներ, «տոմիք» կոչուած ապաստանարաններու մէջ, իսկ շինարարական, կառուցողական գործը կը յառաջդիմէ կրիայի քայլերով: Մեզի համար յստակ չէ տակաւին: Արդեօ՞ք վերանայուած են շինարարական, կառուցողական «նորմա»ները, զանոնք յարմարցնելով երկրաշարժային, ռիխթըրեան չափանիշերու: Օգտագործուած շինանիւթերը հսկողութեան կ'ենթարկուի՞ն պատկան իշխանութեանց կողմէ: Արդեօ՞ք անհրաժեշտ ծառայութիւնները, որոնք պակսեցան երկրաշարժի ժամանակ, ներկայիս տրամադրելի են, եթէ Աստուած մի արասցէ, ցնցում մը եւս պատահի: Տակաւին շատ մը հարցումներ կան որոնք պատասխաններ չունին, յատկապէս երկրի տիրող իշխանութեանց աղետի գօտիի վերաբերեալ կարգադրութեանց նկատմամբ: Ոչ միայն շինարարական, այլ արդիւնաբերական, գաղթականական, կրթական, առողջապահական հարցերը ինչպէ՞ս դասաւորուած են ներկայիս: Այս բոլորը կը մնան հարցական: Յատկապէս, գաղթականութեան պատճառաւ, Կիւմրիի բնակչութեան թիւի շուրջ տարակարծութիւններ կան որ հազիւ 40 հազար հայութիւն մնացած է այդ շէն եւ կենսուրախ քաղաքին մէջ: Տակաւին չենք խօսիր Սպիտակի, եւ այլ գիւղական շրջաններու մասին, ուր «կեանքի որակ» հասկացողութիւնն ալ «աղետի գօտի»ի կը նմանի:*

*20րդ տարեդարձի համազգային նշումներու ընթացքին ցաւի, դառնութեան եւ յուսախաբութեան զգացումներուն հետ, անհրաժեշտ է նաեւ, ընդհանուր կերպով, մտածել հայ ժողովուրդի մօտ քաղաքական իրապաշտութեան մը զարգացումին մասին, որուն լոյսին տակ, Հայաստան-Ղարաբաղ-հայ արտասահման մշակեն միասնական գործունէութեան յստակ ուղեգիծ մը, հայ ժողովուրդի առջեւ ներկայացող հարցերու հաւաքական լուծման համար...*

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԺԱՆԷԹ ՄԻՆԱՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր, 2008, առաւօտեան ժամը 11ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, 1510 E. Mountain Avenue, Glendale:*

*Սգակիրներ՝*
*Ամուսինը՝ Ալպէր Մինասեան*
*Դուստրը՝ Սիրան Ժումանա Մինասեան*
*Թոռնիկը՝ Մայա Մինասեան*
*եւ համայն ազգականները եւ բարեկամները: Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

# ՎԵՐՅԻՇԵԼՈՎ 1988 ԹՈՒԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՂԵՏԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*լիս ոչ միայն ըմբռնել եւ մեկնաբանել վերտիկալ տատանումների ծագումը եւ գերազանցումը հորիզոնականներին, այլեւ ջերմային, էմանացիոն երեւոյթները էպիկենտրոնական գօտում: Ընդհանրապէս հայկական լեռնաշխարհում եւ յարակից տարածքներում ուժեղ երկրաշարժների օճախները կապուած են բեկուածքային գօտիների ճիւղաւորման տեղամասերի եւ հատման հանգոյցների հետ: Այդպիսին է, օրինակ, Երզնկայի «սինտակսիս» կոչուած տարածքը, որտեղ 20րդ դարում տեղի են ունեցել մօտ 1.5 տասնեակ ուժեղ երկրաշարժներ: Նրանցից ուժեղագոյնը 7.7 բալ մագնիտուդայով տեղի է ունեցել 1939 թ. եւ խլել է մօտ 50 հազար մարդու կեանք: Հենց Երզնկայի հատուածի հետ են կապուած Հիւսիս-Անատոլիական բեկուածքին յարող երկրաշարժերի 40 տոկոսը: Այստեղ 25-40 տարին մէկ տեղի է ունենում շատ ուժեղ երկրաշարժ: ՀՀ-ն տարածքում այս տիպի է Հիւսիս Հայաստանեան բեկուածքային աղեղի Ախուրեանի, Դեղնագետ-Սարիղամիշի, Գառնիի եւ Փամբակ-Սեւանեան բեկուածքների միացման հատուածը: 20րդ դարը այս բեկուածքային գօտիների համար ակտիւացման շրջան էր: Սպիտակի երկրաշարժին նախորդեց թոյլ սեյսմիկութեան ակտիւացում սեյսմածին եւ սեյսմաակտիւ տեղամասերում: 1985 թ. Մայիսի 13-ին Ջաւախքի բեկուածքային գօտում տեղի ունեցաւ 5.6 բալանոց երկրաշարժ 276 հետհարուածներով: 1986 թ. Օգոստոսին գրանցուեց աւելի թոյլ երկրաշարժ մօտ 2 ամիս տեւած 32 յետցնցումներով: Այնուհետեւ ցնցումները խիստ նուազեցին ամբողջ Հիւսիս-Հայաստանեան աղեղնաձեւ բեկուածքներում, իսկ Դեկտեմբերի 7-ի երկրաշարժից 3.5 ամիս առաջ գրանցուեց անդորր՝ էներգիայի անջատման համարեայ լրիւ դադար: Սեյսմաբանները գտնում են, որ ինչքան երկարատեւ է սեյսմիկական անդորրը սեյսմածին բեկուածքային գօտիներում այնքան մեծ է ուժեղ երկրաշարժի հաւանականութիւնը եւ հակառակը, երբ բարձրանում է թոյլ երկաշարժերի յաճախականութիւնը: Ուժեղ երկրաշարժների նախանշանների շարքին են դասւում վերը նշուած երկրաքիմիական, ջրաերկրաբանական, կենսաբանական փոփոխութիւնները երկրաշարժերի կիզակէտերում: Երկրակեղեւի տարբեր բեկորների տարբեր ուղղուածութեան եւ տարաբնոյթ շարժումների հետեւանքով որոշ ճեղքեր դառնում են աւելի թափանցիկ եւ բարենպաստ զանազան գազերի եւ ջերմային արտահոսքերի համար դէպի երկրակեղեւի վերին հորիզոնները, կենդանի օրկանիզմների եւ բոյսերի վրայ ազդելու, գրունտային ջրերի մակարդակի բաղադրութեան, ջերմաստիճանի եւ այլ փոփոխութիւնների տեսակէտից: Միով բանիւ, ուժեղ երկրաշարժների նախանշանները բաւական շատ են, երբեմն ակնյայտ: Օրինակ, նաւթի եւ գազի հանքավայրերում որոշ անխաջրածինների արտահոսքերի կտրուկ փոփոխութիւնները կարող են բաւարար թուալ երկրաշարժների կարճատեւ կամ որ նոյնն է, օպերատիւ, կանխագուշակման համար: Ցաւոք սրտի դա միայ՛ն թւում է եւ ներկայումս դեռեւս չի յաջողւում անսխալ կանխագուշակել երկրաշարժները կարճ ժամանակի համար: Առաւելագոյնը ինչ յաջողւում է դա երկարատեւ կանխագուշակումն է, որը ըստ էութեան, կատարւում է տարածքների սեյսմիկ կամ երկրաշարժավտանգաւորութեան շրջանացման քարտեզների կազմելով: Դրանք ցոյց են տալիս թէ որտեղ եւ ինչպիսի տիպի շէնքեր կարելի է կառուցել: Դրանում կարեւոր դեր է պատկանում գրունտների վարկածի գնահատմանը երկրաշարժի ժամանակ: Հիմնուելով այդ բոլորի վրայ օրինակ, այստեղ Գալիֆորնիայում յառաջիկայ 30 տարիների համար կանխագուշակուել են 7 բալանոց երկրաշարժներ Սան Ֆրանսիսքոյի շրջանի հմաար 70 տոկոս հաւականութեամբ եւ Լոս Անճելըսի համար 85 տոկոս հաւականութեամբ: Դրանք վտանգաւոր են այն շինութիւնների համար, որոնք ունեն սպասուածից ցածր սեյսմակայունութիւն: Ընթերցողին հանգստացնելու համար նշենք որ վերջին տասնամեակներին այստեղ, ինչպէս նաեւ ՀՀ-ում շէնքերը կառուցել են եւ կառուցւում են ելնելով տեղանքի առաւելագոյն սեյսմավտանգաւորութեան գնահատականներից եւ դրանց բնակիչների համար էական վտանգ չեն ներկայացնում:*


2
alltimearmenianfavorites
KOHAR
Symphony Orchestra and Choir
3 DVD PACK
INCLUDING SUBTITLED LYRICS + 172 PAGE SONGBOOK
3 CD PACK
+ 120 PAGE SONGBOOK
www.hayasa.us